

ՈՍԿԱՆ ՎՐԴ. ԵՐԵՒԱՆՑԻ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

ԼՈՒՍԱԽՈՐ ԷՋ ՄԸ
ԺԷ. ԴԱՐՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1975, ք. 1-2, էջ 5-51)

3

ՊԻՐՈՄԱԼԼԻ ԵՒ ՈՍԿԱՆ՝ ԼԵԶԱՍՏԱՆԻ ՄԷՋ
(1638-1641)

Հաւատաստիւ Ս. Ժողովը, 1637 թուականի վերջերը, Հ. Պիրոմալլին կը յանձնէր ուրիշ առաքելութիւն մը, կարգադրել ու խաղաղեցնել՝ Լվովի հայ թեմին մէջ՝ Նիկողայոս Արքայս.ին ու Ժողովուրդին մէջ հատուածին միջեւ ծագած վէճը: Նոյն ՀՍ.ի Ժողովին 1637 թուականի Դեկտ. 12ի նիստին զեկուցումէն կը տեղեկանանք թէ Հ. Պիրոմալլի ինքզինք տրամադիր կը յայտարարէ ստանձնելու իրեն վստահուած այս փափուկ առաքելութիւնը:

Յաջորդ տարին, 1638ի Յուլիսին զինք կը գտնենք Լվով, ուր կը մնայ տարի մը, մինչեւ 1639ի աշունը: Ոսկան ալ արդէն Լեհաստան է, նմանապէս Կիրակոս Վրդ. Երեւանցին:

Հ. Պիրոմալլի, թէեւ սկիզբները տեսակ մը հիացումով արտայայտուած է Նիկոլ Թորոսովիչ Արքայս.ի մասին, ինչպէս կ'երեւի իր 1638 Օգոստ. 15 թուակիր նամակէն, ուղղուած առ Կարդ. Պարպերինի, բայց յետոյ շուտով փոխած է կարծիքը: 1639ի աշնան, ՀՍ.ի Ժողովի նիստերէն մէկուն մէջ կը զեկուցուի թէ Լեհաստանի Առաքելական Նուիրակը ու Հ. Պիրոմալլի գրած են որ հայ Ժողովուրդը դժկամակութիւն ունի Նիկոլ Արքայս.ին յանձնելու իր Ս. Խաչ եկե-

Հրատարակութիւն Ս. Ղազարի Հայկական Կաթոնի

Publication de l'Académie Arménienne de Saint-Lazare - Venise

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեամբ» մղաստով

Publié avec le concours de la «Fondation Calouste Gulbenkian»

1. AP. Acta 1637, v. 12, f. 374, n. 21; f. 423, n. 23; f. 426.

դեցին²։ Մանաւանդ թէ, Հ. Պիրոմալլի այն տեսակէտին իսկ հասած է՝ թէ հարկ է հեռացնել Արքայս.ը իր աթոռէն, կա՛մ Հռոմ կանչելով եւ կա՛մ այլուր հեռացնելով, եթէ կ'ուզուի հայ թեմին մէջ խաղաղութիւնը վերահաստատել։

1639ի Յուլիս 18ին, ՀՍ.ի Ժողովը կ'որոշէ գրել Լեհաստանի Առաքելական Նուիրակին, որպէսզի փութացնէ Հ. Պիրոմալլիի Հռոմ վերադարձը։ Հ. Պիրոմալլի, հայագէտ ու աստուածաբան, թանկագին ոյժ՝ Ս. Ժողովին համար, 1639 տարին չլրացած կ'ուղղուի Հռոմ, ուրիշ պատասխանատուութիւններ ստանձնելու։

Կ. Պոլսոյ հայ Պատրիարքութեան ու Սսոյ Աթոռին պնդումներուն վրայ, Հռոմի եկեղեցական շրջանակներուն մէջ, վերսկսած էր դարձեալ հրահրուիլ հայ Աստուածաշունչի եւ այլ ինչ ինչ ծխական գիրքերու տպագրութեան հարցը։ Եւ ինչպէս տեսանք նախընթաց դրութիւն մէջ, Հ. Պիրոմալլի անգամ էր այդ հարցերուն վերաբերմամբ կազմուած Յանձնախումբին։

Բայց ահա 1639ի աշնան, ինչպէս կը գեկուցուի ՀՍ.ի Ժողովին մէջ, Լեհաստանի թագաւորը կը խնդրէ որ Հ. Պիրոմալլի Լվով վերադառնայ, շարունակելու իր սկսած հաշտարար գործունէութիւնը՝ հայ թեմին մէջ։

1640ի Մարտ 26ին, ՀՍ.ի Ժողովը հաւանած է որ ան Հռոմէն մեկնի նախ Լվով, անկէ ալ շարունակէ ուղին դէպի Ս. Էջմիածին, ղեկավարութեամբ մը՝ Փիլիպպոս Կաթողիկոսի մօտ։

Հ. Պիրոմալլի, նախ քան Հռոմէն Լվով մեկնումը, ՀՍ.ի Ժողովին կը յանձնէ տեղեկագիր մը՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանական ինչ ինչ կէտերու մասին, զոր կը մակագրէ «Հայոց մուրաբիւնները», որոնք 1640ի Ապրիլ 26ի նիստին օրակարգի նիւթ կը դառնան։

1640ի Յունիս ամսուն մէջ, կը ձեռնարկէ նաեւ «Հայ Պատարագամատոյց»ին վերատեսութեան, առ ի տպագրութիւն։

Հուսկ՝ նոյն տարուան Օգոստոսի կէսին ճամբայ կ'ելլէ դէպի Լեհաստան, ուր կը հասնի, հիւանդութեան մը առթած տաղտուկով, ոչ առաջ քան Դեկտեմբերի կէսերը։

1641ի Փետրուար 26ի նիստին մէջ, ՀՍ.ի Ժողովը կը գեկուցանէ արդէն որ Հ. Պիրոմալլի Լվովի մէջ ձեռնարկած է իրեն յանձնուած առաքելութեան³։ Հետեւ է նաեւ իր աշակերտներէն՝ Կիրակոս Վարդապետ, որ ջատագովներէն մէկը կը հանդիսանայ Քրիստոսի մէկ անձին մէջ երկու բնութեանց միացեալ անբաժան միութեան վարդապետութեան։ Ոսկան եւս, հաւանօրէն, դեռ Լեհաստանը թողած չէր՝ երբ Հ. Պիրոմալլի հոն կը հասնէր 1640ի վերջերը։

2. AP. Acta 1639, v. 13, f. 315, n. 25.

3. AP. Acta 1641, v. 14, f. 284, n. 32.

1641ի Ապրիլ 10ի ՀՍ.ի Ժողովի նիստի ընթացքին կը գեկուցուի՝ թէ Հ. Պիրոմալլիի հաշտարար գործին թեւ ու թիկունք կ'ըլլան Լեհաստանի Թագաւորը ու Նուիրակը։ Բայց Նիկոլ Արքեպիսկոպոս ուժդին կը դիմադրէ անոնց ու կը մերժէ Ս. Խաչ եկեղեցին վերադարձնել Ժողովուրդին⁴։

Նոյն տարուան Մայիս 18ի նիստով, ընդառաջելով Լեհաստանի առաքելական Նուիրակի առաջարկին, ՀՍ.ի Ժողովը կ'որոշէ գէթ առժամայէս Լվովէն հեռացնել Նիկոլ Արքեպիսկոպոսը, իր տեղը նշանակելով իբր կառավարիչ հայ թեմին՝ նոյն ինքն Հ. Պիրոմալլին։ Բայց մինչ Նիկոլ Արք. տեղիք չի տար, Հռոմ կը յանդի վերջին միջոցառութեան. Պիրոմալլիին յանձնել ղեկավարութիւնը առ Փիլիպպոս Կաթողիկոս⁵։

* * *

Ո՛ւր էին այս շրջանիս Ոսկան եւ իր ընկերները։

Վերեւ տեսանք՝ թէ Ոսկան, նոյնպէս նաեւ Կարապետ՝ եղբայրը Կիրակոս վրդ. Երեւանցիին, 1638 թուականի սկիզբէն ի վեր Լեհաստան էին, իբրեւ ուսանող։

Ո՛ւր գետեղուեցան անոնք. մեզի յայտնի չէ։ Լվովի հայ դպրանոցը, այն որ Կալանոսէն հիմնուեցաւ, դեռ բացուած չէր։ Թող որ ատիկա պատանիներուն համար էր։

Կը պակսին մեզի մանրամասնութիւններ՝ Ոսկանի եռամեայ այս ուսանողութեան շրջանին։ Քանի մը վաւերաթուղթեր, սակայն, դոյզն լոյս կը սփռեն անոր վրայ։ Ահաւասիկ անոնք. 1638 Դեկտ. 23 թուականի Նամակով մը, կը խորհինք թէ դրուած ըլլայ շատ հաւանօրէն Լեհաստանէն, Ոսկան երիտասարդը կը հաղորդէ իր վիճակը Ուրբանոս Ը. Պապին։ Նամակը կը սկսի այսպէս. «Մերոյ եւ պատուական Հօրդ եւ ամենից իշխող հայրապետիդ եւ յաջորդի Սրբոյ Առաքելոյն Պետրոսի, Ուրբանոսի գերահրաշ Պապիդ՝ վշտապատ եւ տառապեալ տրտմախտեալ եւ յամենայն ուրախութեանց տարամերժ Ոսկանս...»։

Նամակագիրը կը փափաքի Պապին պարզել միայն իր վիշտերը. «զի երկիր լցաւ անիրաւութեամբ, կ'ըսէ. ամենեքեան խոտորեալք եւ ոչ մի ոք կամի զճշմարտութիւն, այլ զփառս ի միմեանց առնուն, ուսուցանելով զմարդկան պատուիրեալս։ Ոչ կամին բնաւ լսել զսէրն որ ի Քրիստոսէ քարոզեալ, այլ զնորին հակառակն...»։ Յայտնի է թէ Ոսկան Լվովի հայ թեմին չփոթ վիճակին ազդեցութեան տակ է եւ դուցէ նաեւ յուսախար։ Զրկանքի ու աղքատութեան մէջ, կերակուրի դրամն անգամ կը պակսի իրեն, ոչ ալ տեղ մը ունի բնակու-

4. AP. Acta 1641, v. 14, f. 284.

5. AP. Acta 1642, v. 15, f. 115, n. 16.

թեան. «բայց միայն այս՝ զի հալածական եղեալ աստ անդ, հետիոտ չրջիմ խնդրելոյ զճշմարտութիւն, զի եթէ եւ մեռանել եւս հասանիցեմք, ոչ կարեմք քողով զճշմարտութիւն. այլ քարոզեմք յամենայն տեղիս ուր հասցուք: Քանզի ոչ [?] այնպիսի բորբոքումն հրոյս որ ի երանելոյս Պօղոս-Պիւղմալի վարդապետէ, զի դարձեալ չիջանիցի»⁶:

Կը խնդրէ ապա Սրբազան Պապին հովանաւորութիւնը իբրեւ որդւոյ մը վրայ, ըլլայ, ատիկա յանձնարարականով մը՝ ուղղուած «առ Իշխանս» (անշուշտ կը հասկնայ Լվովի 12 դատաւորները), կամ ալ նիւթական նպաստով մը, «զի մի՛ խափան լիցի գործառնութիւն մեր վասն երկիւղի եւ ոչ կարեկցութեան Ձերոյ...»: Իր գիրը կը փակէ այսպէս. «Ահա ես գիմն ասացի, իսկ զՔոյն Դու գիտասցիք»: Ու կը խնդրէ իբրեւ յիշատակ Պապէն «մի գեղեցիկ Աստուածածնի պատկեր՝ ի վերայ մագաղաթի նկարեալ»⁷:

Դադափարապաշտ այս ազնիւ երիտասարդը, Արեւմուտքի այս հայ գաղութին մէջ, Նիկոլեան անփառունակ վէճերու շրջանին, հանդիպած է յուսախաբութեանց, եւ իբրեւ վերջին յոյսի լաստափայտ կը դիմէ Սրբ. Պապին: Ի՞նչ ընդունելութիւն գտաւ իր այս դիմումագիրը՝ Հռոմի եկեղեցական շրջանակներուն մէջ: Կ'անգիտանանք: Բայց ուրիշ վաւերաթուղթեր մեզի ազօտ նպաստ մը գոնէ կը բերեն, նշոյլ մը սփռելով Ոսկան ուսանողի Լեհաստանի մէջ վարած կեանքին շուրջ:

Ոսկան, 1639ի առաջին ամիսները, մինչ տակաւին Լեհաստան կը գտնուէր, հայրենիքէն նամակներ ընդունեցաւ. իր սիրելիներէն ու նախկին ընկերներէն, անոնք որ վերահասու եղած էին անոր նժդեհ-հոգեթեան դժուարակիր օրերուն, զինք կը հրաւիրէին դէպի հայրենիք:

Այդ նամակներուն օրինակները — բնագիրները անշուշտ Ոսկանի մօտ պէտք են մնացած ըլլալ — տարօրինակ կերպով վատիկանի Մատենադարանը մտած են, հայ գրչագիրներու կարգին: Անոնք խակագիր ընդօրինակողի մը ձեռքէն ելած են. բայց այսօր մեզի համար թանկագին են՝ ճանչնալու համար ինչ ինչ մանրամասնութիւններ, Ոսկանի Լեհաստան ապրած շրջանէն, որոնք այլապէս մթին պիտի մնային:

Այդ նամակներէն մէկը, թէեւ անթուական, բայց զետեղելի է իր խումբին հետ, գրուած էջմիածինէն, 1639 թուին պէտք է ըլլայ:

6. Այս վերջին պարբերութիւնը դժուարեւթեանի է բնագրին մէջ. թերեւս կարդալու է. «բանգի ուր այնպիսի...»:

7. AP. Lettere diverse lingue, v. 180, f. 292: Բնագրին լուսատիպը տե՛ս «Բագմալիպ» 1966, թ. 11-12, էջ 292: Տե՛ս Յաւելուած, թ. 3:

Նամակը ուղղուած է «Հոգեւաշունչ եղբօրդ մերոյ՝ Տէր Ոսկանիդ, նուաստ, յեղեռնագործ եւ սատարակ [ստահակ⁸] յեղբօրէ քումմէ Տէր Յովհաննիսէ Հայրապետէ, որ եւ յաւուր օծմանն [եւ] անուանեցաւ Տէր Կարապետ, եւ փծուն անուն Մկրտչէ. որ եւ տէրութիւնն իսկ ընկալաք Փետրուարին ԺԴ. օր Տեառնընդառաջին»:

Նամակագիրը՝ յետ հարցնելու Ոսկանի որպիսութիւնը, փռանկաց երկրին մէջ, եւ յայտնելու թէ ինք կը գտնուի ի ծառայութեան «ի յօտն [Փիլիպ]պոս Կաթողիկոսին», կու տայ շահեկան տեղեկութիւններ Ս. էջմիածնի Միաբանութենէն. թէ Միմէոն Վրդ.ը, անտարակոյս Զուղայեցին, Մայր Աթոռ փոխադրուած է եւ հոն հիմնած է «Աթէնս շնորհօք Ս. Հոգւոյն», այսինքն՝ Դպրանոցը. թէ կը դասախօսէ Քերականութիւն, Պարփիւր, Արիստոտէլի Ստորագութիւնք եւ Պերիպրաքսիտը: Նմանապէս կ'աւանդէ մեկնութիւններ Արարածոց եւ Պօղոսի Երրայեցոց Թուղթին. թէ մեծ աշակերտները լաւ ուսած են, իսկ կրտսերագոյնները «ըստ իւրեանց չափովն»: Ու, կ'աւելցնէ թէ աշակերտութեան թիւն է ընդամէնը 30, որ կազմուած է խմբելով Խաչատուր, Եսայի եւ Զաքարիա վարդապետներու նախկին աշակերտները:

Ապա նամակագիրը կը յաւելու. «Դարձեալ թէ դու աստ լինէիր, քան զամենեսեան գերագոյն լինէիր». մինչդեռ դուն, կը գրէ, օտար ազգերու մօտ գացիր: Հոսկ կը յաւելու մաղթանք մը՝ «Աստուած զքո սիրտի իղձն եւ զքո փափաքն [որ] բազում ժամանակաց փափաքէր, առեր: Տեսանեմք թէ որպէս ճոխ քաջութեամբ կու ելանես այդի, ծաղկեալ լի իմաստութեամբ, նման Անյաղթի Փիլիսոփայիցն, որ է Դաւիթ... եւն... Ո՛հ, ո՛հ, թէ զքո ծնողաց համբաւն որպիսի կու լսեմք աղիողորմ վասն հեռացելոյդ»:... «Ահա քո եղբայրն եկն աստ եւ պատմեաց մեզ զծնողէ քումմէ: Վասն Աստուծոյ կու աղաչեմք, Սիրելի եղբայր մեր, Տէր Ոսկան, ահա այսչափ ժամանակս բաւական իմն է. դա՛րձ առ քո Հոգեւոր Հայր եւ եղբայրս մեր, իբրեւ անառակ որդւոյ դարձն: Ուր իցէ մեղայ, անդ եւ իցէ թողութիւն: Ողջ լեր, ի Տէր. ողջոյնելն ի Հոգւոյն Սրբոյ. ամէն»⁸:

Այս նամակին բովանդակութիւնը բաւական կ'ըսէ թէ Ոսկանին մեկնումը դէպի Արեւմուտք, ծնողաց կամքին հակառակ եղած է: Նամակագիրը կը ջանայ արծարծել Ոսկանին մէջ, մտերմական շեշտով մը, դէպի հայրենի երկիր վերադարձի բաղձանքը:

Ինչ կը հայի Ս. էջմիածնի Դպրանոցին, ծանօթ է պատմութեանէն՝ որ Փիլիպպոս Կաթողիկոս, իր նախորդէն՝ Մովսէս Կաթողի-

8. Տե՛ս Ոսկան Վրդ.ի Նամակագիր (հրտ. Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ), «Բագմ.» 1967, թ. 6-8, էջ 133, թ. 12: Տե՛ս Յաւելուած, թ. 7:

կոսէն հիմնուած Յովհաննավանքին Դպրոցը փոխադրեց Էջմիածին, ու անոր խնամքը յանձնեց Սիմէոն Զուգայեցիին⁹ :

Ուրիշ, երկրորդ դեր մըն ալ կայ, միշտ Վատիկանի Մատենադարանի նոյն դարակին մէջ պահուած: Անոր հեղինակը՝ Սիմէոն Վրդ. Զուգայեցիին է, որ Ոսկանին երիցագոյն դասընկերը եղած էր: Այս նամակը, բարեբախտաբար, թուակիր է. 1639, Մարտ 25: Նամակագիրը կը սկսի սա եզակի դարձուածքով՝ «Հետեւող Սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն եւ աշակերտ եռամեծին իմա շատորոյ [Կեսարացւոյ], նուաստ Սիմէոնս առաքեմ ողջոյն սիրալիր եւ համբոյր անկեղծ, ծառայիդ Սրբոյ Գրիգորի Տաթեւացւոյն եւ եղբորդ իմոյ Տէր Ոսկանիդ ի ձեռնին [sic] եղբոր քում Աւետեացդ»:

Այս ճոռոմ խորագիրը արդէն բաւական կ'ըսէ՝ թէ ընկերոջ ու բարեկամին վրայ Սիմէոն կը թուի վերէն նայիլ, դոյզն հեգնական ակնարկով մը:

Նախ կը յայտնէ իր կարեկցութիւնը Ոսկանին հանդէպ, «զի ի մէջ ալաղաւան [!] եւ անողորմ եւ հեշտասէր ազգի բնակեալ ես»: Կ'ըսէ իր տրտմութիւնը, ինչպէս նաեւ Ոսկանին ծնողացը, «վասն քո եւ վասն Տէր Կիրակոսին»: Ապա կը յաւելու. «Այլ վասն Տէր Կիրակոսին սակաւ մխիթարեցաք. իսկ վասն քո, ո՛չ. այլ օր ըստ աւուրց յաւելու. եւ մանաւանդ ծնողք քո եւ եղբարցն քո եւ ընտանեաց եւ բարեկամաց»:

Գիտեմ թէ, կը դրէ, ըրածիդ վրայ զղջացեր ես. «քանզի ես ինքնին դմին հանդիպեցայ»: Քանզի յորժամ ոչ գիտէի զգորութիւնս Գրոց՝ եւ ոչ է[ր] տես[եալ] զդոսա [= իմա՝ Արեւմուտցիները], եռայր սիրտ իմ առ խաբեբայդ. եւ դու գիտակ իսկ ես: Իսկ յորժամ զճճարտութիւն հաւատոյ ու[սայ] եւ զդոքա տեսի, գիտես թէ որպէս ընդ եր[կա]բնակսդ»:

Եւ տակաւին, այն ատեն, կ'ըսէ, անտեղեակ էի բնախօսութեան, աստուածաբանութեան, «այլ սակաւուք հասեալ էի ճճարտութեան: Իսկ այժմ, եթէ տեսանիցես զփանաքիս թէ որչափ շնոր[հօք] Ս. Հոգւոյն յաւելեալ եմ: Նաեւ զհակառակութիւն[?] ընդ նմին դիտեմ ճշմարտապէս: Գիտեմ զի թէ տեսանից[ես], հաւատայցես. իսկ անտեսութեամբ անհնար է քեզ հաւատալ: Մի ասեր թէ պարծի: Ողորմութեամբ [Տն] ոչ խիտանամ այդու, այլ վասն քո ասեմ զի դ[առ]նայցես այդրէն այսր: Նաեւ ոչ եմ ստեալ որպէս [զի] գայցես, այլ ճճարիտ էր ասացեալս: Ուա՛խ, ուա՛խ, զինչ արարից ոչ գիտեմ: Քանզի ոչ միայն վասն դալ[ոյդ], այլ եւ վասն ոչ գիտելոյդ աւաղեմ: Զի այն դիրն, որ առաքել էիր, թէ զքերականութիւն լաւ դիտի (sic), գոյր [...] անարուեստ. ոչ ըստ այնմ արուեստին որ նախ

9. ԱՌ. ԴԱԻՐԻԺ. Պատմ. էջ 312:

[...] ի միջի մերում էր, այլ այլ իմն որ ոչ լուեալ ես. եւ թէ լուեցես, բայց ոչ դիտես. քանզի ի քերականութեան քո ոչ գ[ոյր] ընտրութիւն հոլովմանց բայի: Եւ արդ, զայս հարցից սիրեսցես, սիրեսցիր, սիրիցես, եւ զանազանքն: Քանզի տրամադրութեամբ, տեսակաւ, ձեւով, թուով, դիմօք եւ ամանակաւ անզանազանք են եւ հոլովիւք միայն զանազանեալք»:

Այսպիսի ինքնավստահ ոճով, յետ ընծայելու իր բարեկամ Ոսկանին նմոյշ մը իր քերականական նուաճումներէն, Սիմէոն Զուգայեցի կը յաւելու թէ այդ բաները կը դրէ անոր համար՝ որ «խիստ դովեալ ես զքերականութիւն. [ք]ոյ յայդմ վայրի է: Այլ ի միջի մերում զի՞նչ է քերականութիւն, այլ հարցչիդ զբնախօսութիւնն եւ զաստուածաբանութիւնն»: Ու կը կնքէ իր նամակը այս աղերսանքով. «Արդ, աղաչեմ, եթէ զմեզ մոռացար, վասն մօր քո ե՛կ, ե՛կ, ե՛կ. ո՛չ է բաւ»¹⁰:

Հասկնալի է այսօր Սիմէոն Զուգայեցիի կծու չեչտը հանդէպ Լեհաստանի, հոն կրած դառն փորձառութեան համար, երբ ընկերացաւ իմա շատորոյ Վ. Զուգայեցիին, որ նուիրակութեամբ գացած էր Լվովի թեմին վէճը կարգադրելու համար: Բայց «ալաղաւան» ազգի որակումը՝ անտեղի է ու չզսպուած կիրքի արտայայտութիւն: Հետըզհետէ պիտի տեսնենք թէ այս զոյգ դասընկերները, որոնք այնքան համերաշխ էին, դադափարական դետնի վրայ ո՛րքան պիտի անջատուին իրարմէ:

Կարեւոր կը համարիմ հոս ալ համառօտ կենսադրականը Ոսկանի այս ընկերակցին, քանի որ եղած է դարուն ցայտուն դէմքերէն մէկը:

Հին Զուգա ծնած, Շահ Աբասի բռնադադթին ինքն ալ տարուած է Նոր Զուգա, ուր ստացեր է իր նախնական կրթութիւնը: Տեսանք թէ Ոսկանի մտերիմ ընկերակիցներէն եղած է: 1620ին՝ նախ աշակերտած է իմա շատորոյ Վրդ. Կեսարացիին, ապա նաեւ ատեն մը, Մելքիսեդ Վրդ. Վժանցիին:

Իր վարդապետին՝ իմա շատորոյ Կեսարացիին ընկերակցած է մինչեւ Լվով 1629ին, երբոր սա Նուիրակ զրկուեցաւ Փիլիպպոս Կաթողիկոսէն, խաղաղեցնելու համար թեմին մէջ ծագած վէճերը: Նուիրակին կրած ձախողանքէն, օտար միջավայրի մէջ, երեւան ելած իրենց տղիտութենէն խորապէս ազդուած, հայրենիք դարձաւ 1631ին, ուր նուիրուեցաւ յամառօրէն ուսումնական աշխատանքի. սորվեցաւ լեզուներ, քերականութիւն, փիլիսոփայութիւն եւն. . . : Ու սկսաւ զասաւանդել Նոր Զուգայի Ամենափրկիչ վանքին մէջ, ժամանակակիցներէն համալսարան կոչուած:

10. Տե՛ս «Բազմ.» 1967, Թ. 6-8, էջ 131-132: Տե՛ս Յաւելում, Թ. 5:

Ապա Փիլիպպոս Կաթողիկոսը զինքը կանչեց դասաւանդելու Յովհաննաւանքը, ու անկէ ալ էջմիածին, ուր մինչեւ 30 աշակերտ ունեցած է:

1637ին յօրինեց հայերէն Քերականութիւն, բթամիտ մանկանց համար, կը գրէ Առ. Դաւրիթեցին, «Իբրեւ ներածութիւն հնոյ քերականութեան, որ ի թարգմանչացն թարգմանեալ է»: Ստեփանոս Լեւոնցի, իր Տարեգիրքին մէջ, այս Քերականութեան առնչութեամբ, կը գրէ. «Սիմէոն Վրդ. Ջուղայեցի... դուով ի Լէոպոլիս, ընդ Նուիրակին, ետես զտգիտութիւն իւր, զի եւ ոչ զքերականութիւն գիտէր: Իբրեւ դարձաւ յերկիր իւր, այնչափ աշխատեցաւ ինքնին եւ առ այլս, զի ուսեալ շարդերեաց զքերականութիւն, որ եթէ այն է՝ զոր ես տեսի, ոչ է այնքան քանակելի, թէպէտ ոչ է ըստ արհեստի»¹¹: 1649ին գրեց Տրամաբանութիւն, որ իր գլխաւոր երկերէն է. Պրոկղի գիրքը, վրացերէնէ թարգմանուած, ըստ Դաւրիթեցիին: Իր այս գիրքերը, յետ մահու տպուեցան ալ, իբր դասագիրք, 1724ին եւ 1794ին, Կ. Պոլսոյ մէջ:

Առ. Դաւրիթեցին կը գրէ իր մասին. «Ս. Հոգին սլարդեւեաց նմա բան վճիտ եւ գերապանծ եւ շնորհալի ի քարոզութիւնս, ի հակաճառութիւնս, ի մեկնութիւնս Աստուածաշունչ Գրոց, կամ արտաքին գրոց, ի բնական քննութիւնս եւ ի փիլիսոփայական արուեստս», ու եղաւ գերազանց քան իր ժամանակակից վարդապետները¹²:

Երրորդ նամակ մըն ալ հայրենիքէն դուրսէն է Ոսկանին, 1639ի Ապրիլ 29ին, առանց տեղի նշանակութեան: Նամակը ուղղուած է՝ «Տեառն Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայ Ջաքարիա Վրդ. է» առ «հարազատ որդեակդ իմ Տէր Ոսկանդ»:

Գրութեան ոճով՝ վերացական ու խրթին, սխալադիր ու թերականաւոր նամակ մըն է, դատելով խալ օրինակողին մեղի տուած ընթերցողածէն: Միտք բանին սակայն միշտ նոյնն է. համոզել Ոսկանը՝ վերադառնալու իր երկիրը, սիրելիներուն մօտ. «Ի բնիկ երկիր քո եւ ի նախնի քո սիրելիս: Տի՛նա խոցեացես յարտասուս մօր քո, զոր [sic] մորմոքի մեծաւ թախանձամբ ի տուէ եւ ի գիշերի, եւ ի կարօտութիւն եղբարց քոց եւ ընտանեաց: Քանզի պատճառք դարձի յոգունք են, որ ստիպեն զքեզ: Եթէ միոյն ոչ անսայցես, գոնեայ միւսումն անսա: Կամ լուր ձայնի իմում, որ սիրեմք զքեզ եւ հայրօրէն ինչ իւրիք խնամակար լեալ եմ քեզ. կամ անխայեա ծնողի քո եւ եղբարց, զոր [sic] տառապին միշտ. զի անիծեալ ի Տեառնէ որ ցասուցանէ զհայր եւ զմայր իւր» ըստ Սիրաքայ (Գ. 18)»:

11. Հմատ. Հ. Ղ. Ալիշան, Կամեմից, Վենետիկ, 1896, էջ 141:

12. ԱՌ. ԴԱՒՐԻԹ., Պատմ. էջ 309-314:

Ոճը կը յայտնէ աւելի սերտ մտերմութիւն մը, իբրեւ հօր, դաստիարակի ու խնամակալի՝ առ որդին:

Նամակը կ'եղբարեակուծի այսպէս. «Արդ սիրելի որդի, մի՛ լիցի այլեւայլ կարծիք կամ միտք արասցես կամ ամօթ համարեսցիս չղաւնալն: Ե՛ս եղէց երաշխաւոր քեզ առաջի Հոգեւոր Տիրին – այսինքն՝ Փիլիպպոս Կաթողիկոսին – եւ զինչ որ քո կամքն է՝ այնպէս տամ առնել թէ՛ քանակաւոր եւ թէ՛ վարդապետական իշխանութիւն, որպէս քո եղբարցն եղեալ է, քեզ եւս այնպէս առնել տամ»:

«Դարձի՛ր, դարձի՛ր եւ ե՛կ այսր, զի զամենայն ցանկութիւն քո լցուցի [sic] աստ եւ լիցիս որդի զօրութեան շնորհօք Տեառն. ամէն»¹³:

Առաջին նամակագիրը ինքզինքը կ'անուանէ Յովհաննէս Հայրապետ: Մտերիմ ու հայրական բնոյթ կը կրէ գրուածքը: Կը համարինք սա ըլլայ նոյն ինքն Յովհաննէս Վրդ. Արղնցի. մշակուած մտքի տէր ու խոհական եկեղեցական մը եղած է, Փիլիպպոս Կաթողիկոսի խորհրդականը ու վստահութեան մարդը, զոր 1653ին՝ Կ. Պոլսէն Լեւոնտան զրկեց Նուիրակ. եւ ան էր որ յաջողեցուց, Լվովի Նիկողայոս Արքային երթը Փիլիպպոսի մօտ, ներում խնդրելու եւ հաշտուելու Կաթողիկոսին հետ:

Իսկ ո՞վ է Ջաքարիա Վրդ.ը, երրորդ նամակին հեղինակը:

Նամակը, որ օրինակութիւն մըն է եւ ոչ թէ բնագիր, չի կրեր անունը աշխարհին՝ ուրկէ մեկնած է:

Երկու Ջաքարիաներ կային այն ատեն, որոնք Ոսկանին հանդէպ կրնային մտերմական շեշտ մը գործածել, ինչ որ յիշեալ գրութիւնը ունի: Անոնցմէ առաջինն է՝ Ջաքարիա Վրդ. Վաղարշապատեցի կամ էջմիածնեցի, որ Ժէ. դարուն սկիզբները ծնած, մեծ Շահ-Աբասի տեղահանութեան ժամանակ՝ ծնողքին հետ Նոր Զուղա փոխադրուեցաւ: Հոն զարդացաւ ու զանազան լեզուներու մէջ հմտացաւ: Դաւիթ Դ. Կաթողիկոսէն ձեռնադրուեցաւ արեղայ. եւ Մովսէս Տաթեւացի Վրդ.ին աշակերտեցաւ, ու 1628 թուին հետեւեցաւ իրեն մինչեւ էջմիածին, ուր ստացաւ նաեւ վարդապետական դասազան: Մովսէս Կաթողիկոսին յաջորդը, Փիլիպպոս, զինքը եպիսկոպոս ձեռնադրեց 1637ին – ճիշտ այն տարին՝ երբ Ոսկան ուսման համար դէպի Արեւմուտք ուղղուած էր – եւ կարգեց Առաջնորդ Յովհաննաւանքի, ուր սա արդիւնաւոր Առաջնորդութեամբ մը փայլեցաւ ա) շինարարութիւններով, բ) վանքին նիւթականը ապահովելով, գ) ուսումնական վարարան ստեղծելով, թէ՛ դրադարանը ճոխացնելով եւ թէ մանաւանդ դպրատունը ծաղկեցնելով, ուր կարգած էր Սիմէոն Վրդ. Զուղայեցին՝ ուսուցիչ չափաբերութեան ու բնագիտութեան, Ջաքա-

13. ՏԵՍ «Բագմ.» 1967, Թ. 6-8, էջ 183, Թ. 11: ՏԵՍ Յաւելուած, Թ. 6:

րիա Սարկաւազը՝ հայերէնի, իսկ Նիկողայոս Վրդ. Իլովացին՝ երաժշտութեան:

Վանական բարեկարգութեան մէջ՝ հասարակաց կեանքը, անըստացուած կրօնաւորական վարչաձեւը վերահաստատեց:¹⁴:

Զաքարիա Վրդ. Վաղարշապատեցի մեծ ազդեցութիւն ունէր Փիլիպպոս Կաթողիկոսին վրայ: Ի վիճակի էր «երաշխաւոր» լինել Ոսկանին «առաջի Հոգեւոր Տիրին», քահանայական ու վարդապետական իշխանութեան առնչութեամբ «որպէս քո եղբարցն եղեալ է, քեզ եւս աշխատէս առնել տամ»:

Այս ցոյց կու տայ թէ նամակագրերը ունէր յայտնի ընդունելութիւն Կաթողիկոսին մօտ. ինչ որ կը յարմարի Զաքարիա Վաղարշապատեցիին:

Միւս Զաքարիա Վրդ. Վանանդեցին է, որ Պոլսոյ Պատրիարք ալ եղաւ, եւ 1640ին վախճանեցաւ: Հաւանօրէն Ոսկանը ճանչցած էր՝ երբ աւ 1637ին Պոլսէն անցաւ դէպի Լեհաստան:

Խնդրոյ առարկայ նամակը, 1639 Ապրիլ 29 թուակիր, գրուած Սիմէոն Զուղայեցիի նամակէն 34 օր ետք, ուր կ'ըսուի նաեւ թէ նամակաբերը՝ Ոսկանի եղբայրը՝ Աւետիսն է, խորհիլ կու տայ մեզի որ այս վերջինս, ուղի ելած դէպի Լիւով, թերեւս երրորդ յանձնարարադիր մըն ալ, Կ. Պոլսէն անցըին, Զաքարիա Վ. Վանանդեցիէն առած ըլլայ: 34 օրերու հեռաւորութիւնը, Սիմէոն Զուղայեցիի ու Զաքարիա Վրդ.ի նամակներուն միջեւ 25 Մարտէն 29 Ապրիլ, արդեօք Աւետիսին ճամբորդութեան անջրպէ՞տը կը նշէ՝ Արեւելեան Հայաստանէն մինչեւ Պոլիս, ուր Զաքարիա Վանանդեցիէն առած ըլլայ վերեւ յիշուած 1639 Ապրիլ 29 թուակիրը:

Ենթադրութիւն մըն է այս, որ սակայն նուազ հաւանական կը թուի քան առաջինը. որովհետեւ նախ՝ հարց է թէ ունէ՞ր Վանանդեցի Զաքարիա, Փիլիպպոս Կաթողիկոսի մօտ, այն հեղինակութիւնը՝ զոր ունէր Վաղարշապատեցին. եւ երկրորդ՝ «Որպէս քո եղբարցն եղեալ է, քեզ եւս աշխատէս առնել տամ» երաշխաւոր դարձուածքը, աւելի կը պատշաճի Յովհաննասիւնը նստող Զաքարիա Վաղարշապատեցիին, որ խորհրդականի դերն ալ ունէր Փիլիպպոսի մօտ:

Կը թուի թէ, Աւետիս՝ Ոսկանի եղբայրը, երեք յիշեալ նամակներն ալ հետը առած, մօրը կողմէ Լեհաստան մեկնած է, համոզելու համար իր հարազատը՝ որ իր պանդխտութեան վերջ տայ:

Կայ հուսկ չորրորդ գրութիւն մըն ալ, պահուած Վատիկանի Մատենադարանը, նոյն արկղին մէջ:

14. ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿ. Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, Գ. էջ 34-35: ԱՌ. ԴԱԻՐԻԺ. Պատմ. էջ 59: Կ. ՂԱՅԱԴԱՐԵԱՆ, Յովհաննասիւնը եւ նրա արձանագրութիւնները, Երեւան, 1948, էջ 54-57:

Ասիկա իր ոճով ունի պաշտօնական աղերսագրի մը բնոյթը, եւ գրուած է նոյն ինքն Ոսկանէն, «Նուաստ [եւ] տառապակիր [ս] Ոսկանս»: Ուղղուած է զիրը «Երկոտասան դատաւորացի», որ ըսել է Լիւովի հայ Վարչութեան, ու յատկապէս անոնց ատենապետին կամ փոխանորդին, որուն կը հաղորդէ իր դիտաւորութիւնը վերադարձի, եւ կը խնդրէ ուղեծախսի համար նիւթական օգնութիւն: Կը գրէ. «Կամիմ դառնալ առ Հայրն իմ սեփական եւ ի բնիկն իմ դաւառ, ըստ խնդրման եւ ըստ խոստման մերայնոցն վարդապետաց»՝ այսինքն առ Փիլիպպոս Կաթողիկոս:

Կը խնդրէ միանգամայն անոնց ներողամտութիւնը, եթէ երբեք անոնց ծանրութիւն եղած է: Ու իր ազնիւ հողիով, առանց ոչ ոք վիրաւորել ուղեւու, եղածին համար չքմեղանք մը կը դռնէ. «Զի այսպէս լինել՝ ոչ էր ըստ մեր նախաօթար կամակարուութեան, այլ ըստ դիպուածոյ»: Իրաւամբ ալ, թէ՛ իր եւ թէ՛ Տէր Կիրակոսին ծրարելով՝ էր Հռոմ երթալ ու հոն Հայոց համար տրամադրելի վարժարանը տեղաւորուիլ: Հուսկ, Ոսկան կը խնդրէ Դատաւորներուն օժանդակութիւնը «վասն Աստուծոյ». «Ուղղեցէք զգնացս առ Հայր հանուրց եւ առաջնորդեցէք ինձ առ Տէրն իմ խնամիչ. զի դնացեալ անդ, առ նաւահանդիստն իմ եւ հանդար[տեալ] ի ծովածուի ալեացս»: Իսկ դուք, ատոր փոխարէն, կը մաղթէ, գտնէք Քրիստոսէն՝ խաղաղութիւն եւ անդորրութիւն հանդերձեալ կեանքի մէջ¹⁵:

Այս վաւերագիրն ալ չունի թուական: Գրուած է անշուշտ իբր հրաժեշտի դիր, նախ քան Լեհաստանը լքելը:

Բոլոր այս գրուածքներն ալ միեւնոյն խնդրին հետ կապուած են. ուստի, թուականով ալ իրարմէ շատ հեռու պէտք չեն ըլլալ:

Ընթերցողը կրնայ ինքնիրեն հարց դնել. Ի՞նչպէս եղած է որ այս գրուածքները, ընդօրինակուած, մինչեւ Հռոմ հասնել են ու Վատիկանի մատենադարանը մտած:

Շատ պարզ է ատոր մեկնութիւնը. Հռոմ եղած էր այդ աշակերտները Լիւովի թեմին վարչութեան յանձնողը, ու յանձնարարողը որ անոնց խնամքը ստանձնէին: Ատոր համար մինչեւ իսկ լեհ թաղաւորին գրուեցաւ: Արդ, հիմա անոնցմէ մէկը՝ Ոսկան կը մեկնի. հարկ է բացատրութիւն տալ: Ոսկանին ստացած նամակներուն օրինակները ձեռքէն առած են, թղթածրարը չինած ու Հռոմ զրկած: Անշուշտ իբր բացատրութիւն եղածին, ու իրենք զիրենք չքմեղելու:

Զաքարիա Վրդ.ին գրութիւնը, ինչպէս վերը տեսանք, շահեկան պարագայ մըն ալ կը յայտնէ մեզի: Կը խոստանայ միջնորդել Հոգեւոր Տիրոջ մօտ, այսինքն՝ Փիլիպպոս Կաթողիկոսին, ինչ կը վերաբերի իր քահանայութեան ու վարդապետական աստիճանին:

15. ՏԵ՛Ս «Բազմ.» ամի, էջ 134, թ. 13: ՏԵ՛Ս Յաւելուած, թ. 8:

Ասիկա կասկած կը ներշնչէ՝ թէ արդեօք Ոսկան, 1637 թուականին, փախստական էրգրուածէն դէպի Կ. Պոլիս եւ Արեւմուտք, քահանայ ձեռնադրուած էր, արեղա՞յ էր թէ սարկաւադ, կամ պարզապէս դպիր:

Երբ, յետ իր փախուստին էջմիածնէն, ծայր տուին հետապնդուներ, 1635 տարին սկսեալ, ինք հազիւ քսանամեայ էր: Կրնար արդէն կուսակրօն քահանայ ձեռնադրուած ըլլալ:

Ակնարկ մը հեռաւոր, Լվովի ԺԲ. դատաւորաց կողմէ իրեն տըրուած բարի վարքի վկայականին, կարծէք այս հարցին կու տայ լուծում: Հոն կը գրուի թէ Ոսկան «Պատարադամատուցութեամբ» բարի օրինակ եղած է իրենց:

Թէեւ անթուական է այդ վկայագիրը ու Ոսկանին անունը չկայ, բայց բովանդակութիւնը շահեկան է: Հոն կ'ըսուի. «Ի համագումար գնդէ ժողովոյ ԺԲ. դատաւորացս Իլով քաղաքի, հասցէ գիր սիրոյ, եւ նամակ գգուական առ ամենայն հայասեռ աղղղ, վասն բարեբարոյ եւ քրիստոնէակիրք արեղայիդ Տէր [այս անուն], որ սպասաւորեալ ամենայն կենօք եւ քաղաքավարութեամբ իւրով Աստուծոյ, մանաւանդ սրբոց տաճարաց, աղօթանուիրութեամբ պատարագամատուցութեամբ. իսկ այժմ կամ եղեւ դմա մեկուսանալ ի մէջն էլ յեկանել այդ կողմանսդ»¹⁶:

Ուրեմն Զաքարիա Վրդ.ին առաջարկը՝ կարգադրելու Հոգեւոր Տիրոջ մօտ իր քահանայութիւնը, ձեռնադրութեան չի վերաբերիր, որքան դուցէ անոր կանոնականութեանը, եթէ ան Լեհաստան առած էր իր ձեռնադրութիւնը:

Վերոյիշեալ գրութիւնները կ'ամբողջացնեն, մասամբ գոնէ, այս դադափարապաշտ մաքուր հայ հոգեւորականի ողիսականին մէկ ծալքն ալ, որ ի խնդիր մշակոյթի ու հաւատքի գիտութեան՝ ընդառաջ կ'երթայ ամէնազգի զրկանքներու, ինչպէս ինքն իսկ կը յայտնէր 1638ի Դեկտ. 23ին իր գիրով՝ Ուրբանոս Ը. Պապին:

Այսպէս Ոսկան կը վերադառնայ հայրենիք: Իր վերադարձին թուականը կը համարինք ըլլայ 1640ի վերջը. իսկ եթէ իր ընկերոջմէն՝ Կիրակոս Վրդ.էն անջատուիլ ուզած չըլլայ, իր բնակութիւնը Լեհաստան կրնայ երկարած ըլլալ մինչեւ 1641 թուականի առաջին կէսը: Որովհետեւ Տէր Կիրակոս դեռ 1641 տարուան սկիզբներն ալ Լեհաստան է, իր Ուսուցիչին կողքին: ՀՍ.ի Ս. Ժողովին, սոյն թուականին սկիզբները դումարուած նիստին մէջ, կը ղեկուցուի անոր գործունէութիւնը՝ Հ. Պրիմալլիի հետ, որ Լվով կը գտնուէր, հայ թեմին մէջ համերաշխութիւն գոյացնելու համար: Պրիմալլի կը տեղեկագրէ, ի մէջ այլոց, թէ Տէր Կիրակոս համարձակ կը քարոզէր՝

16. Տէ'ս անդ, էջ 134, թ. 14: Տէ'ս նաեւ Յաւելուած, թ. 9:

Ջատագովելով Քաղկեդոնի ժողովին քրիստոսաբանական բանաձեւին ուղղափառութիւնը¹⁷:

Գիտենք նաեւ թէ Տէր Կիրակոս, 1641-1642, Կ. Պոլսոյ Պատրիարք եղաւ: Ուրեմն, Ոսկան առ առաւելն մինչեւ 1641 տարիին սկիզբները, կամ մինչեւ անոր առաջին կէսը, իր բնակութիւնը Լեհաստան երկարած ըլլայ, ու իր ընկերոջ Կիրակոս Վրդ.ի հետ Պոլիս ճամբորդած, անկէ ալ շարունակելու իր ուղին դէպի հայրենի տունը, ուր ըզձա՛կաթ իր դարձին կը սպասէին իր սիրելիները:

4

Հ. ՊԻՐՈՄԱԼԼԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԷԶՄԻԱՄՆԻ ՄԷԶ

ԼՎՈՎԻ ՀԱՅ ԹԵՄԻՆ ՀԱՐՑԸ

Մինչդեռ Ոսկան եւ իր ընկերները տակաւին Լեհաստան կը գտնուէին, ի խնդիր ուսման, Լվովի հայ թեմը՝ Ժէ. դարուն այս երեսնական թուականներուն՝ խռովեալ վիճակի մէջ կ'այլեկոծէր:

Մովսէս Գ. Կաթողիկոսը կանխող՝ Մելքիսեդ Կաթողիկոս, այդ թեմին վրայ եպիսկոպոս օծած էր Նիկողայոս Թորոսովիչը, հայ պատմադիրներէն սովորաբար ճանչցուած Նիկոլ անունով, առանց ժողովուրդին կողմէ ներկայացման. արդէն ժողովուրդին վստահութիւնն ալ չէր վայլեր: Հետեւա՞նք. ժողովուրդը փակած էր եկեղեցիներուն դռները՝ իր Արքեպիսկոպոսին առջեւ, ու դադրեցուցած հասերու տուրքը:

Մովսէս Գ. Կաթողիկոս, ինչպէս նաեւ իրմէ յետոյ՝ իր անմիջական յաջորդը Փիլիպպոս, Նուիրակներ զրկած էին, որպէսզի թեմին մէջ խաղաղութիւնը վերահաստատէին. անոնց, սակայն, պակասած էր ժամանակին ու պարագաներուն պահանջած հեռատեսութիւնն ու վարուելակերպը:

Անոնք այնպէս վարուած էին, ինչպէս սովոր էին Օսմանեան ու Արեւելեան կայսրութեան մէջ՝ տիրական իշխանութեամբ. մինչդեռ իրենց դէմն ունէին ուժեղ անձնականութեան տէր անձ մը՝ Նիկոլը, եւ որ միջոցներուն ընտրութեան մէջ ալ շատ խտրի չէր դնէր, ու

17. AP, Acta, v. 14, n. 32, f. 284:

քրիստոնեայ վեհապետի մը եւ անոր օրէնքներուն պաշտպանութիւնն ունէր ի նպաստ իրեն:

Նկատողութիւններ ասոնք՝ որոնք բացակայ եղած էին Գրիգոր ու խաչատուր Կեսարացի վարդապետներու գործելակերպէն: Երկուքին առաքելութիւնն ալ ձախողած էր:

Ժողովուրդին մեծամասնութեան ու իր Առաջնորդին միջեւ լարուածութիւնը այնքան զայրացած ու անհաշտ բնոյթ առած էր, որ վերջինս իր դիրքը ու իշխանութիւնը ամրացնելու իբր միակ միջոց գործածեց՝ յայտարարել իր յարումը ու եկեղեցական հաղորդակցութիւնը կաթողիկէ Եկեղեցիին, ու նաեւ, իրաւասական գետնի վրայ, ենթարկումը Հռոմի Աթոռին, անջատուելով էջմիածնի Աթոռէն:

Կեցուածք մըն էր ասիկա՝ որ ինքնին հարցերու ծրարը Լվովի սահմանափակ թեմէն վեր կը փոխադրէր, Հռոմի ու Հայաստանեայց Եկեղեցւոյ երկու գաղաթիւները:

Այս զոյգ Եկեղեցիներուն մէջ, թէեւ խոր չըլլար դաւանական խտիրը, սակայն եկեղեցական հաղորդակցութեան զօդն ալ յստակ չէր: Պատմութիւնը, դարերու ընթացքին, բարդած էր խոչեր ու խութեր. խորտուբորտութիւններ ստեղծուած էին, զոր հարթելու գովելի ճիգ ու բարի կամք թէեւ երբեք չէր պակսած, բայց դժբախտ պարագաներ, մանաւանդ քաղաքական աննպաստ պայմաններ զանոնք ամուլութեան դատապարտած էին: Արդ՝ Լվովի թեմին յիշեալ նորարորութեւ հրդեհը ամէն ինչ մերկապարանոց կ'ընէր: Երկու Եկեղեցիներուն Պետերը դէմ առ դէմ կը դրուէին, իրենց փոխ-յարաբերութիւնները յստակ մթնոլորտի մէջ զետեղելու հարկադրանքին առջեւ:

Հռոմ, որուն թարգմաններէն մէկը եղաւ այն ժամանակ Հ. Պիրոմալի, արմատական ու տեւական դարմանը կը տեսնէր՝ բանակցութեանց ուղիով՝ հասնիլ վերահաստատելու տեւականապէս միաբանութիւնը, Հայաստանեայց Եկեղեցւոյ Պետին ու Հռոմի Եպիսկոպոսին միջեւ, համաձայն եկեղեցական աւանդութեան:

Անգամ մը որ այս հիմնական ձեռնարկը՝ երկու Եկեղեցիներու գաղաթիւ յաջողութեամբ պսակուէր, Լվովի հայ թեմին Արքեպիսկոպոսը՝ Նիկողայոս Իմֆնաքերաքար պիտի վերադառնար ենթարկուելու իր սեփական Կաթողիկոսին՝ էջմիածնի. իսկ թեմին եկեղեցիներուն, այսինքն՝ պաշտամունքի տաճարներուն հարցը ինքնաբերաբար լուծուած կ'ըլլար:

Այն պարագային որ Արքեպիսկոպոսը մերժելու ըլլար Հայոց Կաթողիկոսին հպատակիլ, էջմիածին լիով իրաւունք կ'ունենար զինք զահնկէջ ընելու, տեղը ուրիշ Առաջնորդ մը անուանելով, անշուշտ՝ հաճութեամբ հաւատացեալ ժողովուրդին, ըստ կանոնաց եւ սահմանադրութեանց Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Իրաւական հարցը կապուած ըլլալով Եկեղեցիներու հաղորդակցութեան հարցին, որ եկեղեցաբանական հարց մըն էր, իր խորքին մէջ, առանձին ու անջատաբար չէր կարելի կարգադրել: Վէրքը արմատէն եւ ընդ միշտ բուժուած կ'ըլլար, գաղաթիւն վրայ փոխադարձ հաղորդակցութեան վերահաստատումով: Ատիկա էր բնականոն ուղեգիծը ներդաշնակութեան: Վերէն վար, մինչեւ բուրգին ստորոտը ծաւալելու համար քրիստոնէական սէրը, եկեղեցական ներդաշնակութիւնն ու գործակցութիւնը, անվկանդ պահելով Հայաստանեայց Եկեղեցւոյ անձնականութիւնը ու Արեւելեան Եկեղեցիներու սեփական ուրոյն դիմագիծը:

ԲԵՌՆԱՐԴՈՍ ԵՊՍ.ԻՆ ԱՅՑԸ ԷՋՄԻԱԾԻՆ

Ուշադրաւ է քննել թէ ո'րքան հնարաւոր եղած է այդ ուղին կոխել՝ այդ ատենուան գործիչներուն համար:

Այսպիսի ծրագրով էր որ Ուրբանոս Ը. Պապը, 1640 թուականին, օգտուելով Բաբելոնի Բեռնարդոս եպիսկոպոսին դէպի Սպահան երթէն, անոր յանձնեց պատգամաւորութիւն մը առ Փիլիպպոս Կաթողիկոս, նամակով մը՝ որով զինք կը հրաւիրէր ձեռք առնել իր նախորդին, Մովսէս Գ.ին ձեռնարկած միաբանական բանակցութիւնները:

Բեռնարդոս Եպիսկոպոսը 1640ի Ապրիլ 18ին արդէն Երեւան հասած էր: Յաջորդ օրը կ'անցնէր Ս. էջմիածին, ուր Կաթողիկոսին ու իր միաբաններուն կողմէ կը գտնէր սիրալիւ ընդունելութիւն:

Միաբանութեան ժուժկալ ճաշը հիւրին ուշադրութիւնը կը գրաւէր: Տօնի օր ըլլալով, կը դրէ, միս ու գինի ալ բաշխուած էր սեղանակիցներուն: Նոյն գիշերը, հիւրերը Երեւան կ'անցնեն: Յաջորդ առաւօտ տեղի կ'ունենայ հանդիսաւոր ընդունելութիւն՝ Միածնի իջման տաճարը, թափօրով: Կաթողիկոսին կողմէ ողջոյնի ուղերձ, աղօթք: Ապա վարդապետներէն մէկը հիւրին ոտքը կը լուայ: Այցելութիւնը տասը օր կը տեւէ: Կաթողիկոսը կը փոխադարձէ՝ հիւրին այցի երթալով: Հուսկ տեղի կ'ունենան միաբանական բնոյթ կրող խօսակցութիւնները:

Ահա թէ Բեռնարդոս Եպիսկոպոսը ի'նչպէս կ'ընկարագրէ զանոնք Ուրբանոս Ը. Պապին, 1641 Ապրիլ 5 թուակիր նամակով. Փիլիպպոս Կաթողիկոս, երբ ձեռքը կ'առնէ Պապին գիրը, յոտնկայս կ'ընթեռնու զայն, եւ ապա ճակատը կը տանի: Ձեր գիրը, կը գրէ Եպիսկոպոսը առ Ուրբանոս Ը., մեծ սիրով ընդունեցաւ Կաթողիկոսը. Քիւսիս երբ կարդաց այն անցքը՝ ուր Ձեր Սրբութիւնը կը թելադրէր Քրիստոսի մէջ, Երկուց բնութեանց վարդապետական հրամանակարգը,

Ձատկի տօնակատարութիւնը Նիկիոյ ժողովին վճիռներուն համաձայն, ու ոչինչ կ'ըսուէր Լվովի եկեղեցիներուն վերադարձին շուրջ, ու նաեւ հայ եպիսկոպոսին [= Նիկիոյին] վրայ պարտադրելիք հատուցումի մասին...», տհաճած տրամադրութեամբ համակուեցաւ: Այնուհետեւ, ինծի ուրիշ բան չէր մնար, կ'եզրակացնէ Բեռնարդոս Եպիսկոպոս, բայց եթէ ուղիս շարունակել դէպի Սպահան¹:

Մինչ այս, մենք գիտենք թէ Փիլիպպոս Կթղ., 1640 Հոկտեմբեր 12ին, օգտուելով Շահին դեսպանին ուղեւորութենէն, նամակով աղերս կ'ուղղէր Վլատիսլաւ Դ. Թագաւորին, Լեհաստանի հայ եկեղեցիներուն ժողովուրդին վերադարձուելուն ի նպաստ:

Հաւանօրէն, Բեռնարդոս Եպիսկոպոսին այս այցելութեան ու իջմիածին տարած Ուրբանոս Ը. Պապին նամակին հետ աղերս ունի, Փիլիպպոսի այն միւս նամակը, զոր ղրկեց 1642 Յունուար 20ին, Նոյն Պապին: Այս նամակը՝ ՀՍ.ի ժողովին 1643 Յունիս 2ի նիստին մէջ ղեկուցուեցաւ Կարդ. Պամփիլիի կողմէ: Բայց ժողովը որոշեց առժամա չպատասխանել, որովհետեւ այդ գիրը՝ չէր Կաթողիկոսին բռնադիրը, այլ անոր Թարգմանութիւնը, կատարուած Հ. Պիրոմալլիի կողմէ: Լեհաստանէն, լատիներէն քարգմանեալ օրինակը միայն Հռոմ ղրկուած էր. ինչ որ չէր բաւեր ՀՍ.ի ժողովին համար իբրեւ պաշտօնական գիր: Բայց մեզի կը ծառայէ միշտ իջմիածնի կեցուածքը իմանալու համար:

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԹՈՒՂԹԸ՝ 1642Ի ՅՈՒՆՈՒԱՐ 20ԻՆ

Փիլիպպոս Կաթողիկոս, իր այդ նամակին մէջ, նախ լայնօրէն կը ծանրանայ քրիստոնէական եկեղեցիներուն միջեւ տիրելիք աւետարանական սիրոյ հարկաւորութեան վրայ, Առաքեալին պատուէրին համաձայն: Կը յիշատակէ՝ թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի ու Ս. Սեդրեստրոս Պապի օրերէն սկսեալ սէրը զուգած է երկու եկեղեցիները, ցորճան կանգուն էր Հայոց Թագաւորութիւնը:

Կու տայ Հայաստանեայց եկեղեցիին ուղղափառ հաւատքը, մաս-

1. AP. SOCG, v. 121, f. 82-123.

Այս պատուիրակութեան նկարագրութիւնը դէպի Ս. իջմիածին, տե՛ս 8. Քիւր-ՏԵՄԱՆ, Նիւքեք Փիլիպպոս Կաթողիկոսիմ կեանագրութեան համար, ՀԱՍԿ, 1956, թ. 4, էջ 114-116: Լվովի թեմին եւ եկեղեցիներուն հարցին առնչութեամբ՝ Մովսէս Գ. Կաթողիկոս ալ, 1632 Օգոստ. 19 թուակիր. կոնդակ մը ուղղած էր Ուրբանոս Ը. Պապին. ընթերցողը կրնայ զայն տեսնել Յանկուածիմ մէջ, թիւ 2: Մովսէս Գ. Տաթևացիին եղբայրական ու սիրալիւր շեշտով կը խնդրէ Սրբգ. Քահանայապետին ազդու միջամտութիւնը՝ այդ հարցին կարգադրութեան համար: Կաթողիկոսին այս նամակը գրուած է իր Նուիրակին՝ Սաչատուր Վրդ. Կեսարացիին Լվովէն վերադարձէն քիչ յետոյ:

նաւորապէս տարակարծութեան ու տարակուսանքի նիւթ՝ Քրիստոսաբանութեան շուրջ: Կը յայտարարէ թէ Հայ եկեղեցին հաւասարապէս կը նղովէ Նեստորն ու Եւտիքէսը՝ իբր հերետիկոսներ. առաջինին բաժանումը՝ Քրիստոսի անձին մէջ, երկրորդին ալ շփոթումը: «Կը դաւանինք, կը գրէ, զՔրիստոս՝ Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ, հետեւաբար Աստուած եւ մարդ, անշփոթ միութեամբ. ո՛չ աստուածութենէն այլափոխուած՝ մարդ լինելով, ո՛չ ալ մարդ լինելէն յետոյ, ոչ ալ փոխադարձ այլալուծով. ոչ մասնակի միութեամբ, այլ ամբողջական, անքակտելի միութեամբ միացեալ, ի վերջան զբան եւ զմիտս, եւ ատոր համար ալ ինչ որ հաւատքի առարկայ է, գիտութեան չենթարկուիր եւն...» - «non confusionem in unione illa, neque consumptionem in invicem; non partialiter communuatur, sed totaliter, indissolubili Unione unitum, supra sermonem et intelligentiam nostram, propter ea quod omne credibile non cadit sub scientia»:

Ապա նամակագիր Կաթողիկոսը կ'անցնի քննադատելու Լվովի Նիկողայոս Արքայսին վատ արարքները, որոնց համար, կը գրէ, ան արժանի է եկեղեցական պատիժի: Հուսկ՝ թէ հարկ է որ Լվովի եկեղեցիներուն մատակարարութիւնը դարձուի հաւատացեալ ժողովուրդին ձեռքը²:

Հ. ՊԻՐՈՄԱԼԼԻ ԴԱՐՁԵԱԼ ԼՎՈՎԻ ՄԷՁ

Մինչ այս Թղթակցութիւնը տեղի կ'ունենար, ինչպէս նաեւ Բեռնարդոս Եպիսկոպոսին այցելութիւնը իջմիածին, Հ. Պիրոմալլի ալ կը ջանար Լեհաստանի հայ թեմին խաղաղութիւնը վերահաստատել՝ Արքայսին ու ժողովուրդին միջեւ: Այս առիթով Պիրոմալլի ունկընդրութիւն մը կ'ունենայ Լեհաստանի Վլատիսլաւ Դ. Թագաւորին մօտ, ընկերակցութեամբ Նիկողայոս Արքայսին:

Ահա՛ թէ ինչ կը գրէ ան այս շրջանին առնչութեամբ, դէպքերէն շուրջ տասնեւհինգ տարի յետոյ, 1654ին Հռոմ ներկայացուցած իր Կեանագրական Յուշերում մէջ, իր այս այցելութեան տպաւորութիւններէն. Նիկողայոս, հայ Արքեպիսկոպոսը, տասներկու տարիէ ի վեր միաբանած էր Հռոմի եկեղեցիին հետ, «խոցաւանդով ամբողջական հնազանդութիւն Առաքելական Ս. Աթոռին, հազիւ թէ իր Պատրիարքին [= Կաթողիկոսին] հետ հաղորդակցէր: Եւ այս՝ ո՛չ եթէ այնքան պատուելուն համար զինք, որքան ցոյց տալու համար անոր ու բոլոր հայ ազգին՝ թէ ինքը Հռոմէական եկեղեցւոյ հաւատ-

2. AP. SOCG, v.122, f. 197-200. Տե՛ս լատիներէն բնագիրը ու անոր հայերէն Թարգմանութիւնը՝ Յանկուած, թ. 12:

քին ու հնազանդութեան եկած է, ոչ թէ խաբուած, այլ համոզուած՝ կաթողիկէ միութեան կարեւորութեան մասին» քննած ըլլալով ասիկա՝ իր իսկ տոհմային գրուածքներուն ընդմէջէն:

Հ. Պիրումալլի, իր կարծիքը պիտի սրբադրէ աւելի ուշ, յիշեալ Արքեպիսկոպոսի անձին շուրջ, ու պիտի դառնայ մէկը անոնցմէ՝ որ Հռոմի ատեանին առջեւ պաշտպանած են անոր հեռացումը թեմէն: Ճիշտ ատոր համար ալ, այս միսիոնարին ներկայութիւնը երբեք հաճելի չեղաւ Նիկողայոս Արքեպ.ին: Խռովարար կը յայտարարէր զինք՝ Հռոմի իշխանաւորներուն առջեւ:

Յիշեալ Արքեպիսկոպոսը, 1645 Յունուար 30 թուակիրով, ուղղուած Իննովկենտիոս Ժ. Պապին, կը գանգատի Հ. Պիրումալլիի մասին, որ իր գրուածքներով, Հայաստանէն, ուղղուած իր թեմին մարդոց, իբր թէ կը խափանէր հաւատացեալ ժողովուրդին բարի տրամադրութիւնները դէպի հաշտութիւն. թէ Հ. Պիրումալլի եղած է, Փիլիպպոս Կաթողիկոսին թելադրողը՝ որպէսզի ան Վլատիսլաւ Դ. Թագաւորին դիմում կատարէ, յոյսեր ներշնչելով Լվովի եկեղեցիներէն մէկ քանի հատին վերադարձին՝ ի նպաստ ժողովուրդին³:

Հ. Պիրումալլի Լվով երկար չկեցաւ: Հռոմէն զինք կանչեցին, թէ՛ Լվովի թեմին հետ աղերս ունեցող հարցերուն տեղեկանալու համար, եւ թէ որովհետեւ այդ տարիներուն, ինչպէս տեսանք, ՀՍ.ի ժողովին մօտ Պոլսոյ Պատրիարքը կը հետապնդէր հայ Աստուածաշունչի հրատարակութեան խնդիրը. այս մասին 1639ի Մարտ 21ին որոշում մը առնուած էր. ինչ որ արդէն անցողակի շօշափեցինք այս մենագրութեան Ա. գլուխին մէջ:

Հ. Պիրումալլի Լվովէն մեկնեցաւ, հետը Հռոմ տանելով նամակ մը՝ գրուած Վլատիսլաւ Դ. Թագաւորէն:

Հ. ՊԻՐՈՄԱԼԼԻԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԹԸ ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՒ ՄԻԱՐԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՀՍ.ի ժողովը, որ արդէն 1640ի Մարտ 16ի նիստով կարեւոր նշանակաւ էր առաքել Հ. Պիրումալլին իբր իր դեսպանը դէպի Ս. Էջմիածին, նոյնը հաստատեց նաեւ 1642ի Յունիս ամսուն, ստիպելով զինք անյապաղ, Լվովի վրայէն, ճամբայ ելլել դէպի Հայաստան, Փիլիպպոս Կաթողիկոսին հետ բանակցելու համար⁴:

Ու Պիրումալլի, ՀՍ.ի ժողովին կողմէ գիրով մը նուիրակուած, 1640ի Յունիս 7էն ի վեր արդէն Հռոմէն ուղի ելած էր դէպի Լեհաստան:

3. AP. SC, Armeni, v. I; f. 21-32. - PETROWICZ Gr., L'Unione degli Armeni di Polonia con la S. Sede, Roma, 1950, pp. 119-120.

4. AP. Acta 1642, v. 15, f. 115, n. 16.

տան: Ծանր հիւանդութիւն մը դանդաղեցուցած էր իր ուղեւորութիւնը դէպի Հայաստան, ինչպէս ինքն իսկ կը ճշտէ 1654ի իր Կեմսագրական Յուշերում մէջ: 1642ի Սեպտ. 25ին է որ կը սկսի պատրաստութիւններ տեսնել շարունակելու իր ուղեւորութիւնը:

Հ. Պիրումալլի յուսալից է իր ձեռնարկին յաջողութեան մասին, խրախուսուած մանաւանդ Էջմիածնի դահակալին մէկ նամակէն, գլորուած 1642ի Յունուար 20ին, Լվովի հայ հասարակութեան, ուր Կաթողիկոսը կը յայտնէր իր գոհունակութիւնը Հ. Պիրումալլիի Լվով կատարած հաշտարար դերին նկատմամբ: Այնքան ոգեւորուած է որ կը յուսայ յանգիլ երկու եկեղեցիներու միջեւ եկեղեցական հաղորդակցութեան:

Հ. Պիրումալլիի այս դեսպանութեան առնչութեամբ, Ուրբանոս Ը. Պապը 1640 Յունիս 16 թուակիր գիր մը ուղղած է առ «Սիրելի Եղբայր Փիլիպպոս Պատրիարք [Կաթողիկոս] Հայոց»: Հոն, մինչ կը հաւատարմացնէ իբր իր նախնակը Հ. Պիրումալլին, սիրալիր շնորհակալ էր ալ կը հրաւիրէ Փիլիպպոս Կաթողիկոսը եկեղեցական հաղորդակցութեան ամրապնդումին:

Միատեղ ուրիշ երկրորդ գիր մըն ալ ուղղած է Պապը Գանձասարի Կաթողիկոսին:

Իսկ ՀՍ.ի Ս. Ժողովը, 1640 Յունիս 7 թուակիրով, կը հրաւիրէ Փիլիպպոսը, Ս. Դղիգոր Լուսաւորչի օրինակով, նոյն եկեղեցական հաղորդակցութեան նորոգութեան: Իսկ 1642 Նոյ. 9ին առնուած որոշումով, Լեհաստանի Առաքելական Նուիրակին կը հրահանգէ, ըսպասել մինչեւ յաջող ելքը Հ. Պիրումալլին յանձնուած այս դեսպանութեան, Լվովի եկեղեցիներուն վերադարձումին համար տեղւոյն ժողովուրդին⁵:

1642ի Նոյեմբեր 23ին, Հ. Պիրումալլի Կ. Պոլիս հասած է. եւ յաջորդ տարուան սկիզբը, ճիշտ 1 Յունուար 1643ին, էրզրում է, ինչպէս երեւան կու գայ իր Յունուար 22ի նամակէն, նոյն քաղաքէն դրկուած: Անկէ կ'իմանանք նաեւ թէ հետը ունի երկու ուղեկիցներ, Լեհաց երկրէն առնուած, հայ թեմին հասարակութեան կողմէ, Գրիգոր Վրդ. մը եւ միւսը՝ Հ. Գասար:

Փիլիպպոս Կաթողիկոսի մէկ թուղթէն, գրուած Խօճա Յակոբ ճանին, ի Սպահան, 1643ին, կը տեղեկանանք թէ ան կը՞սպասէ Գրիգոր Վրդ.ի ժամանումին⁶:

5. AP. Acta 1642, v. 15, f. 202, n. 18; SOCG, v. 292, f. 486; Lettere Volg. v. 20, ff. 66-68; PETROWICZ, l.c.p. 118. 6. ՔԻՒՐՏԵԱՆ, ամդ, ՀԱՍԿ, 1953, Թ. 3, էջ 82-83: ՀՍ.ի ժողովին Յունիս 7ի եւ Ուրբանոս Ը.ի Յունիս 16ի գրութիւնները՝ տե՛ս Յաւելում, Թ. 10, 11:

6. Տե՛ս «Հասկ», 1953, Թ. 3, էջ 82-83:

Հ. Պիրոմալլի կը հաղորդէ նաեւ թէ Կարին հանդիպած է իրեն հայ վարդապետ մը, որ հազիւ տեղեկացած իր ստանձնած առաքելութեան շուրջ, իսկոյն սպառնացեր է վիժեցնել զայն, եթէ երբեք Փիլիպպոս Կաթողիկոս զիջի, նոյնիսկ զինքն ալ գահընկէց ընել տալով: Անունը չի տար Վրդ.ին. միայն պարսկահայատակ էր, կ'ըսէ: Գուցէ ծանօթ Սիմէոն Զուղայեցիին է:

Հ. Պիրոմալլի Երեւան հասնելուն, Կաթողիկոսէն ու զինք շրջապատող եպիսկոպոսներուն եւ վարդապետներուն բազմութենէն մեծ պատիւով կ'ընդունուի: «Կաթողիկոսը այնքան լաւ տրամադրուած էր ի նպաստ միաբանութեան, կը գրէ Պիրոմալլի, որ նոյնիսկ ասոր համար Հռոմ ղրկելիք անձը որոշած էր»:

Այս՝ կը պատահի 1643ի Փետրուար ամսուն, ինչպէս Պիրոմալլի կը հաղորդէ իր 1644 Ապրիլ 1 թուակիր նամակով, ՀՍ.ի Նախագահ Կարդինալին:

Հ. Պիրոմալլիի այս երկրորդ երթը Հայաստան՝ հիմնապէս էջմիածնի Վեհափառին հետ միաբանական բանակցութիւններու համար է, առնչութեամբ Լիովի հայ թեմին հարցին:

Հ. Պիրոմալլիի 1643-1644 տարիներուն ընթացքին Հռոմ ղրկած տեղեկութիւններէն կ'իմանանք՝ թէ նա երեք անգամ էջմիածին, մէկ անգամ Դաւրթ ու մէկ անգամ ալ Սպահան բանակցեր է Փիլիպպոս Կաթողիկոսին հետ, ներկայութեամբը նաեւ Սիմէոն Զուղայեցիի, եւ հոսկ 1644ին, Երեւան:

Այս բանակցութիւնները, ըստ նոյն Միսիոնարին հաղորդագրութիւններուն, երեք զանազան փուլերէ անցած կը թուին, կամ երեք պահեր ունեցեր են. Առաջին Պաիը՝ Յուսախարութեան, Երկրորդ Պաիը՝ Մասնական Համաձայնութեան, Երրորդ Պաիը՝ Թշնամամբի, ընդդիմադիր խումբին կողմէ:

Ա. ՊԱՀԸ՝ ՅՈՒՍԱԽԱՐՈՒԹԻՒՆ

Երբ Կաթողիկոսը առաւ, կը գրէ Հ. Պիրոմալլի, Ս. Պապին նամակը ու կարգաց զայն, իսկոյն հրամայեց որ խօսուի Քրիստոսի երկու բնութեանց վարդապետութեան մասին: Յոյս մը ներշնչեց, ըսկիզբները, ի նպաստ միաբանութեան, «ոչ ամբողջ ազգին համար, իրեն ընդդիմացողներուն եւ անհաւատ տիրապետողներուն պատճառով. այլ միայն...» Լեհաստանի հայերուն համար:

Բայց վախը, կը գրէ ան, որ կ'ազդէր Սիմէոն անուն վարդապետը Կաթողիկոսին վրայ, այն որ հայ ազգին մէջ ուրիշ Մարկոս Եփեսացի մըն է, ոչ միայն կասեցուց Կաթողիկոսը իր բարի տրամադրութենէն, այլ նաեւ ամբողջ ազգը իմ դէմս հանեց:

Հ. Պիրոմալլի, այս տողերը գրած է 1644ի Ապրիլ 1ին, ՀՍ.ի Նախագահ Կարդինալին ուղղած իր նամակին մէջ: Եւ դատելով իր 1643 տարուան Օգոստոս 31ի գիրէն, որ ուղղած էր Ս. Ժողովի Քարտուղար Գերայ. Ինկոլլին, ոչ թէ միայն յուսանաբութեան, այլ նոյնիսկ յուսալքումի բնոյթ կը կրէ: Մինչեւ իսկ վճռուած է Կաթողիկոսին ներկայութենէն:

Այս ձախողանքի գլխաւոր պատճառներէն մէկը եղած է, ուրեմն, ըստ իրեն, Սիմէոն Վրդ. Զուղայեցիին ժխտական կեցուածքը: «Ասիկա, կը գրէ, գլխաւոր թշնամին էր Հռոմէական Եկեղեցւոյ, ո'չ թէ որովհետեւ կ'անդիտանար անոր ճշմարտութիւնները, այլ աւելի վաղեմի ատելութենէ շարժած, ընդդէմ Կաթողիկէներուն, Լիովի մէջ անոնց կողմէ կրած ինչ ինչ չարիքներուն համար»:

Իսկ իր 1644ի Ապրիլ 1ի գրութեամբ, յետ նկարագրելու Սիմէոն Վրդ. Զուղայեցիին իր դէմ յարուցած բոլոր գրգռութիւնները, Երեւանէն մինչեւ Նոր Զուղա, ու Կաթողիկոսին վրայ բանեցուցած ազդեցութիւնը յիշելով, կը յաւելու թէ Սիմէոն ամէն միջոց ձեռք առած է վիժեցնելու միաբանական բանակցութիւնները, մինչեւ իսկ սպառնալով գահընկէց ընել տալ Կաթողիկոսը: «Այս բոլոր աւերը ու որոմնացանութիւնը գործն է վերոյիշեալ Սիմէոն Վրդ.ին, որ Արքեպիսկոպոս ալ ձեռնադրուեցաւ ու Լեհաստան ղրկուեցաւ»:

Յաջորդաբար, նոյն Հ. Պիրոմալլիի 1644 Յունիս 21 թուակիրէն կ'իմանանք որ արդէն Կ. Պոլիս կը գտնուի Սիմէոն այդ թուականին. կը յաւելու թէ Սիմէոն մտադիր է անկէ անցնել Լեհաստան. բայց ի վիճակի չէ հաւաստելու՝ թէ արդեօք շարունակած է մինչեւ հոն իր ուղին, թէ ոչ⁷:

Իր այդ սպառնալիքներով այնպէս ահաբեկեց, կ'ըսէ, Կաթողի-

7. AP. Acta 1643, v. 16, f. 380, n. 41; SOCG, v. 62, ff. 229+243; SC, Armeni, v. I, f. 25 «Curriculum Vitae»; PETROWICZ, o. c. pp. 113-118.

Հ. Պիրոմալլի, առնչութեամբ Սիմէոն Վրդ. Զուղայեցիին, կը պատմէ թէ ինք նամակ մը բերած էր Ուրբանոս Ը. Պապին կողմէ, ուղղուած Գանձաօրի Աղուանից Կաթողիկոսին, որ այն ինչ իրազեկ՝ իր մօտ հրաւիրած է Միսիոնարը, իր 18 եպիսկոպոսներով պատրաստ՝ զինք ընդունելու: Բայց Հ. Պիրոմալլի, կը գրէ, միատուրիւմը ունեցայ սոյն քուզքը ցուցնելու Սիմէոն Զուղայեցիին, որ իսկոյն ազմուկ հանեց թէ Գանձաօրի Կաթողիկոսը հերետիկոս [Փռանկ] դարձած է: Ասոր վրայ թէ՛ Միսիոնար Հայրը զգուշացեր է անձամբ տանիլ այդ թուղթը, եւ թէ Կաթողիկոսը՝ զինք ընդունելու. մի գուցէ կասկած արթնցնեն անհաւատ իշխողներուն մէջ՝ թէ օտար քրիստոնեայ Պետութեան մը բանազնացն է Հ. Պիրոմալլի, եւ մտադիր երկրին քրիստոնեաները Փռանկներուն անթաքնելու:

Իսկ Մարկոս Եփեսացիին, որուն կը նմանցնէ Պիրոմալլի՝ Սիմէոն Վրդ.ը այն յոյն եկեղեցականն է, որ 1430ին, Յիբենցէի մէջ կնքուած լատին-յոյն միաբանական համաձայնութիւնը վիժեցուց իր ընդդիմաբանութեամբը:

կոսը, որ ան ա'լ չհամարձակի խօսք բանալ այդ հարցին չուրջ, մի-
այն դադարի համաձայնեցաւ որ Լեհահայերը մնան իրենց միաբա-
նական դաշինքին վրայ:

Հետեւանք. բանակցական խօսակցութիւնը հակաճառութեան ձեւ
առած է, եւ այնքան շեղած է իր բուն նպատակէն, որ մինչդեռ Փի-
լիպպոս Կաթողիկոս, սկիզբը ընդունած էր, նոյնիսկ դրով, Քրիստոսի
անձին մէջ երկու բնութիւններու ներկայութիւնը, ընդդիմադիր խում-
բին ճնշումին տակ՝ իբր թէ դժուարիւ սկսած է նոյնիսկ «Մի բնու-
թիւն Բանին մարմնացելոյ» Կիւրեղեան բանաձեւին հաւանիլ⁸: Եւ
խօսակցութեան լարուած մէկ պահուն, իր խօսակիցները ըսած ըլլան
թէ իրենք՝ «այլեւս Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքին չեն հետեւիր».
ինչ որ դայթակղութիւն պատճառած է Լեհաստանէն եկող իր հայ
ուղեկիցներուն:

Հ. Պիրոմալլի կը գրէ նաեւ, թէ բանակցութեանց ատենադրու-
թիւնը, Կաթողիկոսը ուզած չէ ընել տալ. բայց ինք, թէ՛ հայերէն
եւ թէ՛ լատիններէն գրած է, որմէ օրինակ մը կը խոստանայ Հռոմ
ղրկել:

Յայտարարելու ենք, սակայն, թէ ինքը Հ. Պիրոմալլին ալ, նման
փափուկ բանակցութիւններու մարդը չէր: Ան տարուած իր բուն
խառնուածքէն, սկսեւ է նոյնիսկ անարգել դարաւոր Եկեղեցի մը՝
զայն իր արժանապատուութեան մէջ վիրաւորելով: Մինչդեռ խաղա-
ղասէր հոգիով հարթելու էր դժուարութիւնները, որպէսզի բանակ-
ցութիւնը չի կարծրանար եւ իր հունէն չհեռանար: Խօսակցութեանց
ընթացքին, երբ իր համբերութեան ջերմաչափին աստիճանը կը ցած-
նայ, Կաթողիկոսը հայրաբար իրեն կ'ուղղէ սա արդար դիտողու-
թիւնը. «Երբոր բժիշկը վէրք մը դարմանելու կ'երթայ, վէրք որ նե-
խած է, եթէ կը խորշի անկէ, չի կրնար դարմանել ու վէրքը չի բուժ-
ուիր: Մինչդեռ եթէ համբերողութեամբ կը դիմանայ խորշումի ըզ-
դացումին, կը բուժէ ու կ'առողջացնէ: Դուք հոս եկեք էք մեր վէր-
քերը, որոնք կան, չեմ ըսեր թէ չկան, դարմանելու. առ այս հար-
կաւոր է համբերութիւն»⁹:

Ճշտելու ենք, սակայն, որ միջադէպէն որոշ ժամանակ մը ան-
ջըրպետուած, Հ. Պիրոմալլի աւելի անդորր դատաստաններ ալ ունի
բանակցութեանց առընչութեամբ: Կը խոստովանի թէ քաղաքական
ինչ ինչ նկատողութիւններ չէին թոյլատրեր Փիլիպպոս Կաթողիկո-

8. AP. SOCG, v. 62, f. 206.

9. AP. SC, Armeni, v. I, f. 26, «Curriculum Vitae»; PETROWICZ, o. c.
pp. 113-117. Վերեւ յիշատակուեցաւ մեզմէ Փիլիպպոս Կաթողիկոսին 1642
Յունուար 20 թուին գիրը, առ Ուրբանոս Ը. Պապ, ուր շատ յտակ է անոր
դաւանաբը՝ Քրիստոսի անձնաւորական միութեան մասին:

սին՝ եպիսկոպոսական Սիւնհոդոս դումարել, թէեւ զանազան անգամ-
ներ ինք թելադրած էր իրեն, ուր ժողովին կարգախօսը պիտի ըլլար
միաբանութեան վերահաստատումը՝ Հռոմի Եկեղեցիին հետ: Երկրին
տիրող իշխանաւորները ի՞նչ մեկնութիւն պիտի տային. Հայերը,
հուսկ՝ ռայաներ, արտասահման դտնուող ազդեցիկ կրօնապետի մը
պաշտպանութիւնը պիտի վայելէին:

Մանաւանդ, իր իսկ վարդապետներէն մէկ հատուածին նախա-
պաշարումները Հռոմի Եկեղեցիին հանդէպ, ՓՈՒՄԿ արհամարհական
մակդիրին մէջ խտացած, նպաստաւոր պարագայ մը չէր: Աւելցու-
ցէք ասոր վրայ նաեւ տիրող ընդհանուր տգիտութիւնը, նաեւ եկե-
ղեցական ուսմանց, նոյնիսկ եկեղեցական բարձր դասակարգին մօտ:

Ահա՛ պատճառներ՝ որոնք չէին դիւրացուցած ոչ իսկ խաղաղ
բանակցութիւն մը, շինարար ոգիով. որուն հետեւանքով՝ ՀՍ. Ի Ս.
Ժողովը, իր 1644ի Յունիս 21ի նիստով, որոշեց հրահանգ զրկել Հ.
Պիրոմալլիին՝ դադարեցնել բանակցութիւնները, որոնց հակաճառական
ընթացքէն բարիք յուսալի չէր: Իտալացի Միսիոնարը պէտք էր նա-
խիջեւան քաշուիլ ու զբաղիլ Ապարանների լատինահայ թեմին դպրո-
ցով. ինչ որ արդէն եղած էր իր սկզբնական պաշտօնը: Ս. Ժողովին
Քարտուղարը, Գերպ. Ինկոլլի, 1644ի Յունիս 21 գիրով մը կը քա-
ջալերէր Միսիոնարը՝ չվհատիլ դժուարութեան առաջ, որուն հան-
դիպած էր¹⁰:

Բ...ՊԱՀԸ՝ ՄԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

1644ի Սեպտ. 12ին, Հ. Պիրոմալլի երկու նամակ եւս ուղղած է
Հռոմի իր Մեծաւորներուն: Անոնք գրուած են Երեւանէն, ու լաւա-
տես շեշտ կը կրեն:

Կը հաղորդէ թէ այդ թուականէն երեք օր առաջ Երեւան հրա-
ւիրուած է Կաթողիկոսէն: Համաձայնութեան նշոյլ մը կը տեսնուի
հորիզոնի վրայ:

Նոյն բնոյթը ունի նաեւ 1644ի Հոկտ. 10ին գրած նամակը: Կ'ա-
ւետէ թէ իր յարաբերութիւնները Կաթողիկոսին հետ՝ բարւոքած
էին:

1644 Սեպտ. 12 թուակիր զոյգ նամակներէն մէկը՝ փաղկաւոր է
Պապին: Հոն կը հաղորդէ Պիրոմալլի՝ թէ «Կաթողիկոսը զրկեց իր
Նուիրակը՝ Գրիգոր Եպիսկոպոս Կամենիցի, թուղթով մը ու Դաւա-
նադիրով՝ երկու բնութիւններու ի Քրիստոս...»: Կը յաւելու նաեւ
թէ համաձայնած էինք Հոգւոյն Սրբոյ բխումին վարդապետութեան

10. AP. Lettere Volg. v. 22, f. 118.

մասին. կը յաւելու թէ մէկը խանդարած է իրենց համաձայնութիւնը: Եւ հուսկ այս տողերը կ'աւելցնէ. «Կաթողիկոսը (ինքը միշտ Պատրիարք կը կոչէ) լաւ դիտաւորութիւններու տէր է. բայց ուժեր կան՝ որ չեն նպաստեր»: Խափանարար ուժերէն մէկը Սիմէոն Վրդ.ն է: Նկատի առնելիք է որ 1644ի Յունիսէն սկսեալ, Սիմէոն բացակայ էր Արեւելեան Հայաստանէն: Կաթողիկոսը առժամապէս զերծ մնացած էր անշուշտ անոր ճշտումէն:

Հ. Պիրումալիի միեւնոյն բանը կը հաստատէ, շուրջ տասնեւհինգ տարի յետոյ, 1654ին շարադրած իր Կեմսագրութեամբ մէջ. այսինքն այն՝ թէ Կաթողիկոսը ստորագրած է երկու բնութիւններու վարդապետութեան, Ս. Կիւրեղ Աղեքսանդրացիի բառերով առ Սուկէնսում [= ad Succensum Ep. 45 եւ 46] գրած թուղթերէն «Երկու բնութիւն միացեալ կը տեսնենք ի Քրիստոս». եւ թէ այդ դաւանադիրը առաջած է Վլատիսլաւ Թագաւորին, հրահանգելով իր Նուիրակին՝ Գրիգոր Եպիսկոպոսին, որ նոյնը նաեւ Պապին ներկայացնէ. եւ թէ յիշեալ դաւանութիւնը մեծ ուրախութիւն պատճառած է Լեհահայոց¹¹:

Այս նուիրակութեան մասին դեռ պիտի անդրադառնանք:

Միեւնոյն թուականով, 1644 Սեպտ. 12ին, դարձեալ Երեւանէն, աւելի մանրամասն տեղեկութիւններ տալով, Պիրումալի կը գրէ Ս. Ժողովի Քարտուղարին՝ թէ երեք օր առաջ կանչուած է գրով Փիլիպպոս Կաթողիկոսէն: Հ. Պիրումալիին իր այս նամակը կը սկսի գոհունակութեան շնորհով մը. «Օրհնեալ է Հայր ամէն բարեաց եւն...». որովհետեւ կը գրէ, Երկուց բնութեանց վարդապետութեան շուրջ համաձայնութիւնը գոյացաւ: Նմանապէս համաձայնած կ'ըլլայինք Հոգւոյն Սրբոյ՝ եւ յՈրդւոյն բխումին վարդապետութեան մասին, հիմնուած Ս. Կիւրեղէն, Ոսկեբերանէն ու Ս. Գրիգոր Նարեկացիէն քաղուած փաստերու վրայ: Սակայն առարկեցին թէ կը վախեն աղբիւրն մէջ յառաջանալիք յուղումէն: Ես ալ լռեցի: Որովհետեւ զգուշանալու է փողահարելէն:

Պիրումալի, Փիլիպպոս Կաթողիկոսի անձին դէմ մեղադրանքը մէկդի թողած՝ կը գրէ. «Կը տեսնեմ որ Կաթողիկոսը լաւ տրամադրութիւններու տէր է. բայց իր վախին պատճառները բազմաթիւ են, ... իսկ ինքը երկչոտ մարդ է»¹²:

Ու կը թելադրէ Գերպ. Քարտուղարին՝ որ Լեհահայ եկեղեցիներէն գոնէ մէկ հատը վերադարձուէր Ժողովուրդին: Վասնզի, կը պատճառաբանէ, հոս՝ նման ելոյթ մը լաւ արձագանք կու տայ: Բացի ատկէ, կը յաւելու, հարկ է որ գրէք սիրալիր ու խրախուսիչ նամակներ՝ Գանձասարի Կաթողիկոսին ալ, որ տողորուած է միաբա-

նական լաւագոյն հակումներով. նմանապէս գրելու է Սպահանի հայ Աւագանիին: Ու դեռ կը շարունակէ. «... Կաթողիկոսը (Փիլիպպոս) տրամադիր է. Լեհահայոց թեմին խնդիրը յարմար առիթ մըն է. մուտքս վերսկսաւ. իսկ մեր Ոսկանը՝ Շամախի Թէջ, աշակերտ կը բազմացնէ...»¹³:

Ոսկան Վրդ. անշուշտ համակրանքով կը հետեւէր այս բանակցութեանց:

Հուսկ կը յայտնէ թէ պիտի վերադառնայ Ապարաններ, ուր այժմ կարելի է, կ'ըսէ, գործակցիլ ներկայ Գաւառական Մեծաւորին հետ: Վերոյիշեալ իր յաջողութիւններուն շուրջ, 1644ի Հոկտ. 9 թրւակիր նամակով մ'ալ անդրադոյն տեղեկութիւններ կու տայ Կ. Պոլսոյ Դոմինիկեան Ուխտին Մեծաւոր Հօրը: Յետ հրահանգներ տալու իր իրեղէններուն մասին, որ Կ. Պոլիս թողած էր, թռչակին եւն... կը պատմէ իր ճամբորդութիւնները դէպի Գանձակ, Սպահան... եւն: Հուսկ կը գրէ. Անցեալ տարի, մինչդեռ դէմս հանած էին տեղւոյս Հայերը, որ զիս չընդունին իրենց մօտ, նոյնիսկ նզովք սպառնալով զանցառուներուն, այսօր կ'լիման փոխուած է: Գլխաւոր ծրագիրս է՝ կը գրէ, երկու Եկեղեցիներուն միաբանութիւնը Քրիստոսի [մէկ անձին, մէջ] երկու բնութեանց դաւանութեանը, երեք առաջին Տիեզերական Ժողովներուն ու բոլոր միւսներուն ալ որ այդ երեքին համաձայն են: Բերանացի դաւանեցան Հոգւոյն Սրբոյ բխումը ի Հօրէ եւ յՈրդւոյ, բայց գրաւոր չուղեցին տալ:...

«Երբ Հռոմ վարուելու ըլլայ Լեհաստանի Հայերուն հետ՝ ինչպէ՞ս որ թելադրեցի, յուսամ միաբանական հաղորդակցութեան վերահաստատումէն յետոյ, մասնաւորապէս գաղտնի խօսակցութեանց համեմատ՝ որ յիշեալ բանակցութենէն յետոյ Կաթողիկոսին եւ ուրիշներու հետ ունեցայ», հարցը պիտի գտնէ իր լուծումը: Ինչ որ զիրենք կը կասեցնէ, այսինքն Կաթողիկոսը ու իր գործակիցները, կը գրէ Հ. Պիրումալի, նախ եւ առաջ անհաւատներուն ու մէկ քանի յամառ աշխարհականներուն վախն է: Հուսկ՝ աղօթք կը խնդրէ իր եղբայրակիցներէն¹⁴:

1644ի Հոկտ. 10ին Նախիջեւանէն գրուած ուրիշ գիր մըն ալ ունի, ուղղուած Ժողովին Արհի Քարտուղարին: Նորութիւնը որ կը հաղորդէ այս է, թէ Կաթողիկոսը «Ս. Գրիգորի եւ Ս. Սեդեքստրոս Պապին միջեւ եղած միաբանութիւնը» բանաձեւելու հետ է: Բայց կարծես թէ, կը յաւելու, ընդդիմութեան հանդիպել է աշխարհականներէն ոմանց կողմէ, որոնք միշտ կը սպասեն Լվովի եկեղեցիներուն հարցին կարգադրութեան:

13. AP. SOCG, v. 65, f. 329-329v+347.

14. AP. SC, Armeni, v. I, f. 11-12.

11. AP. SOCG, v. 62, f. 251-251v; SC, Armeni, v. I, f. 26v.

12. AP. SOCG, v. 64, f. 280.

Երբ Կաթողիկոսին հետ առանձնակի կը խօսակցէինք, կը գրէ Պիրոմալլի, քանիցս հարցուց ինծի թէ արդեօք իր շարադրած Դաւանագիրը կը բովանդակէ՞ր որեւէ դարձուածք մը՝ որ հերետիկոսական կամ գայթակղական ըլլար: Շատ անգամներ «Թելադրեց ինծի աղօթել եւ Աստուծոյ յանձնել գործը: Հիմա մեր բարեկամութիւնը աւելի սերտ է քան առաջ»:

Նամակագիրը կը շարունակէ դեռ. «Երկու բնութեանց բանաձեւումը՝ որ Սպահան շարադրած էր, չգտաւ հաւանութիւնս: Այդտեղ կ'ըսուէր թէ Նեստոր նշովուած էր՝ Երկու բնութիւն եւ երկու անձ ըսած ըլլալուն համար: Անդրադառնալ տուի թէ՝ Նեստոր Երկու անձ ըսելուն համար է որ դատապարտուեցաւ, ոչ թէ Երկու բնութիւն՝ անշփոթ միութեան համար»:

Մինչ Երեւանի մէջ կը բանակցէինք, կը գրէ Պիրոմալլի, երբ յետ ընդունելու Երկու բնութիւն միացեալ մէկ Անձի մէջ, դեռ կը վերադառնային «Մի բնութիւն բանաձեւին», այն ատեն բնագրին մէջ գետեղեցի Ս. Կիւրեղի իրենց ծանօթ բանաձեւը. «Մի է բնութիւն Բանին մարմնացելով», բացատրելով թէ ա'յլ է Ս. Կիւրեղի այդ բանաձեւումը, եւ ա'յլ «Մէկ բնութիւն» ըսել:

Պիրոմալլի կը գրէ՝ թէ այս մարդոց դիտաւորութիւնը բարի է, բայց տգիտութիւն կայ: Կանխապէս հարկ է զարգացնել, հմտացնել: Զիշտ ատոր համար՝ կը ջանամ, կ'ըսէ, իրենց իսկ գիրքերով ու հեղինակներով պատճառաբանել: Իմ կողմէն մեծ համբերութեան պէտք կայ: Իսկ Ձեր կողմէն, հարկ է քաջալերել Կաթողիկոսը, վերադարձնելով [Ժողովուրդին] գոնէ մէկը՝ Լվովի եկեղեցիներէն, ու Սրբազան Պապին կողմէ ալ գրելով:

Ու դեռ շարունակելով իր Թելադրութիւնները, կը գրէ. Պապը հայր մըն է: Ինծի չ'իյնար Ձեզի խորհուրդ տալ, բայց հարկ է գրել նաեւ աշխարհական Մեծերուն, օրինակ՝ Պօղոս Գալանթարին, Սաւրաս Պէյին, որոնք ձայն ունին ու ազդեցութիւն Կաթողիկոսին վրայ: Ուրիշ երկու նամակ եւս, մէկը՝ Գանձասարի, միւսը Սսոյ Կաթողիկոսներուն. «ասոնք երկուքն ալ սերտ բարեկամներ եղան այս դեռագահ Կաթողիկոսին»:

Ու նամակագիրը մեծ լաւատեսութեամբ կը կնքէ իր այս թուղթը, ըսելով թէ երբ Հռոմէն այս բոլորը կատարուի՝ «ոչ ոք պիտի կարենայ խափանել միութիւնը: Դիտելի է որ շատեր մեր կողմն են. բայց հարկ է ընել որքան ինչ ես Ձեզի թելադրեցի»¹⁵:

15. AP. SOCG, v. 62, f. 246-246v+259-259v.

ՓԻԼԻՊՊՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԵՆՆԱՐԿՆԵՐԸ

Փիլիպպոս Կաթողիկոս աղերսական թուղթ մը ուղղած է, 1644ի Յուլիս 27ին Վլատիսլաւ Դ. Լեհաստանի արքային, եւ զայն առաջած է իր Նուիրակին «Տէր Գրիգորիոս Եպիսկոպոսին» ձեռքով:

Յիշեալ թուղթին մէջ, Կաթողիկոսը, յետ ողջունելու աստուածապատիւ մեծագոր Քաղաւորը, կը հրաւիրէ անոր ուշադրութիւնը իր փոքրիկ հօտին վրայ՝ որ իրմէն, այսինքն Կաթողիկոսէն, «տարակայացեալ է»:

Յետ ակնարկելու այդ հօտին հովուին (Նիկողայոս Արքայսին), որ անխնայօրէն «գիշատեաց զհօտ իւր», ահա զրկեցինք, կը գրէ, «որդեակքն մեր եւ զհաւատարիմ խորհրդակիցքն, զՏէր Գրիգորիոս Եպս. ընդ միոյ կրօնաւորի. զոր ինչ վասն մեր է՝ ի նոցանէ լուիցէ ինքնակալութիւնը Ձեր»:

Ապա կը խնդրէ որ ինչպէս իր նախնի Թագաւորները, «գիտօրիկ հօտ մեր պահեալ են իւրեանց կրօնիւքն եւ աւանդութեամբն», Դուք եւս նոյնը հաճէիք ընել. ու մենք ալ Ձեր Թագաւորութեան համար աղօթող ենք:

Հոս, անշուշտ, նամակագրին մտքին համեմատ «կրօնիւքն» ձեւը, աւելի Եկեղեցեալն իմաստը ունի. Հայաստանեայց Եկեղեցիին աւանդութեանց համաձայն:

Հուսկ Կաթողիկոսը շարունակելով. «Իսկ զդաւանութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ ըստ ուղղափառ սրբոց Հարցն, զոր խնդրեաց Պօղոս աստուածաբան Վրդ. ի միւս թղթին ծանիցէ ինքնակալ Տէրութիւնը Ձեր»:

Հոս Պօղոս Վրդ. ընդ նոյն ինքն Հ. Պիրոմալլին է, որուն հետ խորհրդակցաբար շարադրած է Փիլիպպոս Կաթողիկոս յիշեալ դաւանագիրը, ուր կը ներկայացուի Ս. Երրորդութեան ուղղափառ դաւանութիւնը, նմանապէս Քրիստոսի մէջ երկուքն բնութեանց՝ մէկ անձի մէջ, աստուածային ու մարդկային, անշփոթ ու անքակ միաւորութեամբ, ըստ մտաց երեք առաջին Տիեզերական Ժողովներուն. նորովելով Արիոսը, Սաբելը, Մակեդոնը, Նեստորն ու Եւտիքսը:

Այս նամակին վերջը կայ նաեւ Յետ-գրութեան մը. խնդրանք որ՝ Լեհահայոց դատը Թագաւորը ինքնին իր ատեանին մէջ լուծէր¹⁶:

Այլուստ գիտենք թէ յիշեալ Գրիգորիոս Եպիսկոպոսը, վկայութեամբ իսկ Փիլիպպոս Կաթողիկոսի յաջորդական գիրքերուն, լեհահայ է, ուստի ծանօթ՝ երկրին լեզուին ու բարբերուն. եւ որուն գէթ

16. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Կամեմից, էջ 247-249: Այս դաւանագիրին բնագիրը Լեհաստանի պետական գրադարն է, որմէ օրինակ մը մեր տրամադրութեան դրաւ Պետրովիչ Վրդ. իր ծանօթ ազնուութեամբ: Բնագիրը տե՛ս Յաւելում, Թ. 13:

երեք տարի, իբր կաթողիկոսական Նուիրակ, Լեհաստան կեցած ըլլալը փաստուած է: Հաւանորէն Հ. Պիրոմալլի երկրորդ անգամ Հայաստան երթին ընկերացողներէն մէկն է:

Իսկապէս ալ, Հ. Պիրոմալլի, իր 1644ի Յունիս 21ի նամակով, Սպահանէն գրուած, կը յիշատակէ, ի մէջ այլոց, այդ երկու անձներէն, Գրիգոր Վրդ. մը որ դրական դեր կատարած է բանակցութեանց ընթացքին: Մինչդեռ ո՛չ նոյնպէս՝ անոր ընկերը: Իսկ աւելի ուշ, Օգոստոս 22ի նամակով, կը գրէ՝ թէ Փիլիպպոս Կաթողիկոսը, իր այս երկրորդ ընկերը զոր Հ. Գասպար կը կոչէ, եպիսկոպոս ձեռնադրած է Նիկողայոս [= Նիկոլ] Թորոսովիչ Արքեպս.ին տեղը նստեցնելու ծրագրով:

Եթէ Հ. Գասպարն է իսկապէս եպիսկոպոս ձեռնադրուողը, կամ այն է որ ասիկա իր օծումին առիթով՝ Գրիգորիոս անունը առած է, եւ կամ Հ. Պիրոմալլի հեռուէն, Սպահանէն գրող մը, չփոթած է ձեռնադրուողին անունը. դուցէ նոյն ինքն Գրիգորիոս Վրդ.ն էր եպիսկոպոս ձեռնադրուողը. ինչ որ մեզի աւելի հաւանական կը թուի:

Ինչ որ կը գրէ Հ. Պիրոմալլի Կաթողիկոսին ծրագրին մասին, այսինքն՝ փոխանակել՝ հարաւորութեան պարագային, Նիկողայոս Արքեպս.ը՝ նորօժ Գրիգորիոս Եպիսկոպոսով, հիմնուած է: Փիլիպպոս Կաթողիկոս կը յուսար, միջամտութեամբ թաղաւորին, կարենալ հասնիլ այդ լուծումին:

Դաւանական ու միաբանական այս բանակցութեանց առնչութեամբ՝ հարկ կը համարինք յիշատակել հոս պատճէնը Փիլիպպոս Կաթողիկոսի ուրիշ մէկ նամակին, որ Աղայեան Գիւտ քահանայ, իր Դիւան Հայոց Պատմութեան գրքին մէջ հրատարակած է: Նամակը ուղղուած է Իննովկենտիոս Ժ. Քահանայապետին (1644-1655):

Թուականը այս թուղթին՝ հաւանորէն 1644/1645 տարիներուն մէջ է: Հոն, Կաթողիկոսը, իր եպիսկոպոսներուն ու վարդապետներուն դասին հետ միասնաբար, յետ ճանչնալու Սրբազան Պապը իբր «Տիեզերական Հայրապետ – հայր հասարակաց», ու անոր մաղթելու երկար ու խաղաղ հովուական կեանք, Հռոմէական Գահին վրայ, «առ ի պարծանս համայն քրիստոնէից եւ ի հաստատութիւն աստուածային հաւատոց», կը խնդրէ իրմէ որ հաճէր կարգադրել Լվովի հայ թեմին վէճը:

Այս առթիւ, Կաթողիկոսը, պատշաճ համարած է տալ նաեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանանքը, Ս. Երրորդութեան երկրորդ անձին, մարդացեալ Բանին չուրջ իր քրիստոսաբանութիւնը: Կը նշուի անչուշտ նախ Նեստորի բաժանումը, նմանապէս Եւտիքէսի խառնակութիւնը. երկու մոլորական ծայրերը: Ապա կը բանաձեւէ Հայաստանեայց Եկեղեցւոյ քրիստոսաբանական դաւանանքը այսպէս. «Քանզի իմանամք, ըստ որում հաւատամք, զՔրիստոս՝ Աստուած

կատարեալ եւ մարդ կատարեալ. համանգամայն Աստուած եւ մարդ. ոչ փոփոխեալ [այսինքն ոչ այլալաժ, ըսել կ'ուզէ] յաստուածութենէ ի լինելն մարդ, եւ ոչ յետ լինելոյն. ոչ չփոթումն ի միաւորութեան, եւ ոչ ծախումն ի միմիանս. ոչ մնասմբ հաղորդեալ, այլ բոլորաբար. անքակ միաւորութեամբ միացեալ, ի վեր քան զբան զիմացումն մեր: Վասն զի ամենայն որ է հաւատալի, ոչ է ի ներքոյ դիտութեան ենթարկել»: Ինչ որ հաւատքի կը վերաբերի, ըսել կ'ուզէ, իբր խորհուրդ՝ դիտութեան ջննութեան չ'ենթարկուիր:

Այնուհետեւ կը թուէ Յիսուսի տնօրինական խորհուրդները, Ծընունդէն մինչեւ մահը ու փառաւոր Յարութիւնը. ու կ'առաքէ նամակընկալը՝ Ս. Կիւրեղի «Գիրք Պարապմանց» հատորին ու Ս. Աթանասի վարդապետութեան. եւ կը յաւելու. «քանզի այնպիսի դիտաւորութեամբ վարեմք որպէս նոքայն», այսինքն՝ ինչպէս որ այդ երկու Ս. Հայրերը կ'իմանան:

Այնուհետեւ, Կաթողիկոսը թախանձագին կը յանձնարարէ Սրբազան Պապին՝ հաւատք չընծայել անոնց որ իրենց շահերէն մղուած, Հռոմ կու դան ու կը չարախօսեն Հայաստանեայց Եկեղեցին: Անոնք մեզ չեն ներկայացներ, կը գրէ Կաթողիկոսը:

Թէեւ Փիլիպպոս Կաթողիկոս, իր այս դաւանագիրին մէջ, զգուշացած կը թուի ըլլալ դիտմամբ «Անձ» ու «ընութիւն» եզրներուն կիրառումէն, ինչպէս նաեւ Երկու բնութիւն անշփոխ միացեալ ի մի անձն Քաղկեդոնեան զանաձեւումէն, սակայն իբր հաւատքի բովանդակութիւն, իբր դաւանանք, նոյն է՝ ինչ որ Քաղկեդոն աւելի յստակ ու ընդունուած փիլիսոփայական եզրներով սահմանած ու բանաձեւած էր¹⁷:

Հռոմ, ՀՍ.ի Ժողովին 1645ի Մարտ 13ի գումարման, կը գեկուցուի թէ Հ. Պիրոմալլի շրկած է Փիլիպպոս Կաթողիկոսին կողմէ նամակ մը, ուղղուած Ուրբանոս Ը. Պապին, որ սակայն թղթակցական պատշաճութեան (Etiquette) մէկ թերացումին համար, առաքուած է Հաւատքի վարդապետութեան Ս. Ժողովին: Կաթողիկոսին յիշեալ թուղթը՝ հաւանորէն 1644ի վերջերը գրուած է, եւ դուցէ այն թուականին որ գրուած է Վլատիսլաւ Դ. Թագաւորինը, այսինքն 1644ի Յունիս 27ին:

Բայց Ուրբանոս Ը. վախճանեցաւ 1644ի Յունիս 29ին: Իրեն յաջորդեց Իննովկենտիոս Ժ. Պապը:

1645ի Մայիս 9ի գումարման ընթացքին, ՀՍ.ի Ժողովը որոշում կ'առնէ գրել Փիլիպպոս Կաթողիկոսին, խրախուսելով միաբանական իր տրամադրութիւնները:

17. ԱՂԱՅԵԱՆ ԳԻՒՏ ՔԶՆՅ., ԴԶՊ Ժ. Բ. 89-90: Ինչ որ ուշագրաւ է, համանմանութիւնն է Փիլիպպոս Կաթողիկոսի դաւանական այս բանաձեւին եւ 1642ի Յունուար 20ին առ Ուրբանոս Ը. Պապ գրածին մէջ:

Արդեօք Փիլիպպոս Կաթողիկոսի վերոյիշեալ թուղթը նոյն է պատճենին հետ՝ զոր Գիւտ քահանայ Աղայեան հրատարակած է իր Դիւան Հայոց Պատմութեան հատորներուն մէջ: Հոռմի պատճենը տեսած չըլլալով, ի վիճակի չենք արտայայտուելու:

Ամէն պարագայի՝ Կաթողիկոսին սրտին մօտիկ է Լեհահայ թեմին վիճակը ձեւով մը կարգադրելու պահանջը: Հայոց Հայրապետը իր գիտակցութեան մէջ կը դրայ ատիկա: Բայց երկուստեք զժողովուրդինները անյաղթելի կը թուին:

Գ. ՊԱՀԸ՝ ԹՇՆԱՄԱՆՔ ԸՆԴՈՒՄԱԴԻՐ ԽՈՒՄԻՆ ԿՈՂՄԵ

Տարի մը ետք այն թուականէն՝ ուր Փիլիպպոս Կաթողիկոս Լեհաստանի թագաւորին նուիրակութիւն մը ղրկած էր, Հ. Պիրոմալիի դարձեալ Երեւան կ'անցնի, ուրկէ կը գրէ 1645 Յունիս 30 թուակիր նամակը, ուղղուած Ս. Ժողովին Նախագահ Կարդինալին: Լաւատեսութեան շեշտը ցած է: Կը թուի թէ միաբանական բանակցութեանց հակառակորդները զօրացեր են: Ու կը գրէ. «Անհաւատներու տիրապետութիւնը, տգէտներու յամառութիւնը, եւ ամօթը՝ սխալած եմք ըսելու, թոյլ պիտի չտան այս ազգին վերադարձ դէպի եկեղեցական հաղորդակցութիւն, եթէ ոչ զօրեղ ձեռքով»: ու կ'երկրորդէ իր թելադրութիւնը՝ երեք Կաթողիկոսներուն ալ առանձին գրելու հարկաւորութիւնը, նմանապէս ազդեցիկ աշխարհականներուն, որոնց կարգին են Սաֆար Պէյ, Խօճա Պօղոս Գալանթար:

Նոյն տարուան, այսինքն՝ 1645ի Հոկտեմբեր 18ին, Դաւրէժէն, ուր դացած է Պիրոմալի՝ Փիլիպպոս Կաթողիկոսին հանդիպելու համար, կը գրէ Քարտուղար Ինկոլլին, վհատ չեշտով. «Այս Կաթողիկոսէն ոչինչ յուսալի է»: Անհաստատ է ու խաղալիկ ամէնուն ձեռքը: Տրուած ստորագրութիւնները չեն յարգուիր:

Դարձեալ թշնամանք կը լսէ Հ. Պիրոմալի Քաղկեդոնի Ս. Ժողովին դէմ. Զատիկի չորեքշաբթի օրը, մինչդեռ Երեւան կը գտնուէր, կ'ըսէ թէ զինք գանակոծեր են հակառակորդները. եւ երկու օր յաջորդաբար իր պատուհանին առջեւ թշնամանած են Ս. Լեւոնը. եւ թէ կ'ուզեն տիրանալ իր գրուածքներուն: Միայն Երեւանի Խանին աւելցեն տիրանալ իր գրուածքներուն: Կաթողիկոսը բացակայ է եղած այդ օրերուն, եւ հրահանգ թողած է որ իր վերադարձին սպասեմ: Բայց ալ ես արժէք չտուի, կ'ըսէ: Կը թուէ նաեւ ռամիկին սա պատճառաբանութիւնը. եթէ մեր Կաթողիկոսը չ'ախարժիր զինքը ու չ'ուզեր անոր մերկայութիւնը, ինչո՞ւ քովը կ'ընդունի¹⁸:

18. AP. Acta, v. 16, f. 267, n. 29; f. 334, n. 31.

Իսկ 1646ի Փետր. 4 թուակիրով, Հ. Պիրոմալի Սպահանէն, ուղղուած Արհի Քարտուղարին, կ'իմացնէ՝ թէ 1644ի Դեկտեմբերին գրուած նամակը ընդունած է. եւ թէ Սպահան վերադարձին՝ իմացեր է որ Փիլիպպոս Կաթողիկոս Երեւանի Խանին կողմէ դանակոծուած է. թէ մօրուքը փետտած են եւն. եւ թէ Հարադոյնէն ճողորպելու համար՝ Վրաստան փախած է: Նոյն իսկ իբր թէ խօսք կայ ուրիշի մը ընտրութեան: Այս տեղեկութեան հեղինակը՝ չէ նշանակած. ոչ ալ վայրը՝ ուրկէ այդ իրեն գրուած է¹⁹:

Դարձեալ 1646 Մարտ 3 թուակիր նամակով կը հաղորդէ անունը Գանձասարի Կաթողիկոսին, Գրիգոր, որուն հետ թղթակցելու հարկը կ'երկրորդէ: Կ'ակնարկէ քանի մը մանր հայ կաթողիկէ համայնքներուն գոյութեան, Պարսկաստանի եւ Գանձակի մէջ, որոնցմով Նախիջևանի լատինահայ Արքայս.ը չի՝ զբաղիր եղեր: Կը հաղորդէ նաեւ թէ Զահեցի Դոմինիկեան վանքերուն դաւառական նոր Մեծաւորը մեկնած է: Ատով գուցէ կը ձգտի նշել թէ ինչո՞ւ Սպահան կը գտնուի եւ ո՞չ թէ Նախիջևան, ինչպէս իրեն պատուիրած էին իր Մեծաւորները. զբաղի տեղոյն դպրոցով²⁰:

Հուսկ ՀՍ.ի Ժողովին, 1646ի Յունիս 21ի նիստին մէջ, կը գեղուցուի պաշտօնապէս թէ Հ. Պիրոմալիի միաբանական ջանքերը ի դերեւ ելած էին:

Նոյնը կը հաստատէ Նախիջևանի հայալատին Արքեպիսկոպոսը, Տէր Օգոստինոս Բաջենց ալ, 1646 Ապրիլ 1 իր թուակիրով, ուղղուած Ս. Ժողովի Քարտուղարին: Բոլորովին ժխտական կերպով կ'արտայայտուի, տեղի ունեցած բանակցութիւններու ելքին նկատմամբ:

Այդ նամակը, Հոռմ տարուած, հաւանօրէն իր փոխանորդին՝ Հ. Մատթէոս Յովհաննէսի ու Հ. Գրիգոր Մործորեցիի ձեռքով, դառնացած չեշտ մը կը կրէ: Կը ճանչնայ իր թեմին թերի կողմերը, որոնք շատ են, կ'ըսէ. եւ առաւելապէս իր այս սահմանափակ թեմին կարիքներուն ակնդէտ՝ սապէս կը պատգամէ. Մինչ դուք աշխարհ կ'ուզէք շահիլ ի սուրբ հաւատս, կը մոռնաք զանոնք որ այդ հաւատքին մէջ են:

Եւ աւելի ոյժ տալու համար իր տեսակէտին, դառնացած չեշտով մը, առիթէն օգտուելով՝ կը գրէ. Անոնք որ հոս եկած են, — կը հասկընայ՝ Եւրոպացիները — ոչ մէկ բարիք ըրած են, ո՞չ Հայերուն, ո՞չ Թուրքերուն. «մանաւանդ, կ'աւելցնէ, Պատրի Պօղոսն. զի որքան նա չէր եկեալ, սէր եւ միաբանութիւն ի մէջ պակաս չէր: Յորժամ եկն, խռովութիւն եւ չփոթութիւն, մանաւանդ դայթակցութիւն: Եւ այն

19. AP. SOCG, v. 64, f. 286-286v+291-291v.

20. AP. SOCG, v. 64, f. 287-287v+290.

բանք զոր նա գրեալ այ (sic) ի սուրբ ատեանդ, ամենայն սուտ է : Ոչինչ բան չէ արել» :

Կը վերադառնայ իր թեմին թշուառութեան վրայ : Հիներու արդիւնքն ալ վտանգուած է, կ'ըսէ : Կայ իր ծերութիւնն ալ : Եւ եթէ, կը գրէ, ռոճիկս ալ կանոնաւորապէս ստանալու չըլլամ, ի վիճակի չեմ եպիսկոպոսութիւնս շարունակելու, այսինքն՝ թեմին առաջնորդութիւնը :

«Շղրարքն տեղւոյն – իր Զահկեցի կրօնաւորները – ուսման հետ չեն, վասն պակասութեան աշխարհիս. որ թէ ասէք պիտոյ է լաթին կարդան, առաջ պիտոյ է մեր լեզուն լաւ իմանան եւ արտաքին բանի վերահաս լինին, որ յետոյ լաթին շուտով իմանան»²¹ :

Հուսկ կը խնդրէ որ Հ. Գրիգոր Մործորեցին, Հ. Կալանոսէն լատին լեզուին դաս առնէ Հռոմի մէջ :

Կ. Պոլսէն, լատին փոխ-վիճարն ալ նոյնը կը զեկուցանէ, թէ իր ստացած լուրերուն համաձայն, Հ. Պիրոմալի չէ յաջողած Փիլիպպոս Կաթողիկոսին հետ վերահաստատել երկու Եկեղեցիներու միաբանութիւնը ու եկեղեցական հաղորդակցութիւնը : Այս է որ պաշտօնապէս զեկուցուած է Ս. Ժողովին, 1646ի Յունիս 26ի նիստին մէջ²² :

Հ. ՊԻՐՈՄԱԼԻ ՍՊԱՀԱՆԻ ՄԷՋ

Որքան որ Հռոմի Մեծաւորները հետամուտ էին որ Հ. Պիրոմալի ձեռք առնէր Նախիջեւանի հայալատին թեմին դպրոցին ղեկը ու վերականգնէր զայն, անիկա չկրցաւ երբեք համակերպիլ ատոր : Պարզաներն ալ չէին նպաստեր. թեմին յետին կարօտութիւնը, Արքեպիսկոպոսին ալ աւելի կամ պակաս անտարբերութիւնը. ինչ որ կը նշմարուի արդէն Պիրոմալի 1646ի Ապրիլ 1ի նամակէն, զոր գրած է Գերպ. Ինկոլլիին : Հ. Պիրոմալի, 1646ի Փետր. 4ի գրով կը հաղորդէր Ս. Ժողովին՝ թէ չորս անգամ ձեռք զարկած էր այդ գործին, եւ նիւթականի պակասէն՝ չէ յաջողած, ու ձեռնթափ եղած էր այլեւս :

Ճանչնալու ենք անվերապահօրէն՝ թէ այդ թեմին որդեգրած ուղին, հիմնարկութեան սկիզբէն ի վեր՝ խոտոր էր եւ անխուսափելիօրէն ուղղուած դէպի անել : Անշուշտ Հ. Պիրոմալի ալ, որուն չէր պակսեր սրատեսութիւն, զայն վաղուց պէտք է նշմարած ըլլար : Թեմ մըն էր որ իր շիջելափառ կեանքը քարշ կը տանէր : Քիչ մը աւելի քան կէս դար յետոյ ալ արդէն իսպառ պիտի դադրէր, ԺԸ. դարու առաջին քառորդին :

21. AP. SOCG, v. 65, f. 312.

22. AP. Acta, v. 17, f. 132, n. 12.

Եւ ահա թէ ինչո՞ւ Հ. Պիրոմալի նախընտրած էր Սպահան քաղաքի, ուր մնաց 1645–1652 թուականներուն, գրական առաքելութեան նուիրուած : 1646 Նոյ. 15 եւ 1647 Մարտ. 9. թուակիր նամակները, ուղղուած Ս. Ժողովի Կարդինալներուն, կը վկայեն ասոր :²³ :

Յիշեալ գրուածքներուն մէջ ընդլայնուած նիւթերը, գրեթէ ամէնքն ալ հայութեան կը վերաբերին, գոնէ անոնք որ հոս կը յիշատակէ : Այդ նիւթերը են.

- ա) Յաղազս Երկուց բնութեանց ի Քրիստոս.
- բ) Քաղկեդոնի Ժողովին ի նպաստ ջատագովութիւն.
- գ) Զատագովական Հռոմի Եկեղեցիին՝ ընդդէմ գրուածքի մը.
- դ) Երկու բնութեանց դէմ ինչ ինչ առարկութիւններու լուծումը.
- ե) Պարզաբանումը Ժամանակակից Հայաստանեայց Եկեղեցւոյ անկեալ վիճակին.
- զ) Ինչ ինչ սխալ դրութիւններ այն վարդապետաց՝ որոնք կը խափանեն Հայաստանեայց Եկեղեցւոյ Միաբանութիւնը, Հռոմի Եկեղեցիին հետ.
- է) Հայերէն լեզուի քերականութիւն :

Այս գրուածքները, պրակ առ պրակ, իր բարեկամներուն եւ ծանօթներուն՝ որոնք կը հետաքրքրուէին, Թոգադ, Պոլիդ եւն... կը ցրուէր : Ինչպէս, Հալէպէն, Յիսուսեան միսիոնար մը իր Քերականութենէն օրինակ մը ուղած էր, եւ ղրկած է :

Կը գրէ թէ խօսա Սահրատ, ու Մանուկ, որ խելացի մարդ մըն է, արդէն կը հաղորդակցին կաթողիկէ Եկեղեցւոյ հետ : Կան ուրիշներ որ քովս կու գան, կ'ըսէ, դաս առնելու : Անոնց մէջ է վարդապետ մը, Նիկողոս անուն, Տիարպէքիրցի, զոր Կ. Պոլիս իբր աշակերտ ալ ունեցեր էր, եւ որ կը փափաքի Հռոմ երթալ՝ իր ուսումները կատարելագործելու համար :

Խօսա Սահրատ, հայ ազգին գլխաւորներէն, Սպահանի մէջ, երբ տեսած է իր գրուածքը Քաղկեդոնի Ժողովի մասին, խոստացեր է թէ հայ վարդապետները պիտի հրաւիրէ՝ որ քննեն զայն :

Հ. Պիրոմալի, 1654 թուականին շարադրած իր Կննսագրութեան մէջ, զոր վերեւ յիշեցինք, իր կեանքի այս շրջանին առնչութեամբ (1645–1652) կը գրէ հետեւեալը. «Երբ իմացայ թէ Կաթողիկոսին Նուիրակը որ Լեհաստան ղրկուած էր, մեռած էր, ու այլեւս չի՛շած յաջողութեան յոյսը, Սպահան քաղաքացայ, ուր երեք տարի քարոզեցի կաթողիկէ հաւատքը» :

23. AP. SOCG, v. 65, f. 330-330v+331-331v.

Դիտելի է հոս, որ եթէ նամակագիրը «Կաթողիկոսին Նուիրակը» ըսելով կ'իմանայ Գրիգորիոս Եպս.ը, զոր վերեւ յիշատակեցինք, ապակա 1647ին դեռ կ'ապրէր²⁴ :

Սիմէոն Վրդ. Ջուղայեցի, իրազեկ՝ իմ այս գործունեութեանս, Երեւանէն մինչեւ Ջուղա սուրաց, կը գրէ Պիրոմալլի նոյն յիշեալ Կեմսագրականին մէջ. ու իր ազգականները եւ բարեկամները հաւաքած՝ սկսաւ իմ դէմս պայքար մը : Գրդուց ազգին գլխաւորները, բաղմութիւն մը հաւաքած, այր մարդ, կիներ, տղաքներ, հայհուչներով, քարերով զինուած, եկան ծեծելու զիս, զգեստէս քաշելով, նետեցին քաղաքին մայր ճամբուն վրայ : Անշուշտ այն նպատակով որ հայ հաւատացեալը չյաճախէ Սպահանի մէջ եղած լատին միսիոնարներուն եկեղեցիները, պէսպէս անարգական խօսքեր կը չընկնեն ժողովուրդին մէջ՝ ընդդէմ անոնց մատակարարած Ս. Ոորհուրդներուն, աստուածապաշտութեան հրահանգներուն եւն... Ծոմապահութեան կերպին, նշովելով զանոնք որ կը հաղորդին անոնց հետ :

Փիլիպպոս Կաթողիկոս, օր մը զայրացած անոնց վրայ՝ որ կը չափազանցէին Արեւմուտցիներուն թերութիւնները, կը կշտամբէ այդ ծայրայեղութեանց հեղինակները՝ ըսելով. Դուք կը լռէք Արեւմուտցիներուն բարեմասնութեանց մասին, ու միայն թերի կողմերը վեր կը հանէք :

Հ. Պիրոմալլի, այս առիթով կը շեշտէ Ջուղայեցիներուն խաղացած մեծ ազդեցութիւնը՝ հայ եկեղեցական կեանքին մէջ, շնորհիւ իրենց հարստութեան : Կը գրէ. անոնք կարող են ըստ կամս պաշտօնազրկել վարդապետ մը, եպիսկոպոս կամ նոյնիսկ Կաթողիկոսը²⁵ :

1645-1652 տարիներու ընթացքին, Հ. Պիրոմալլի միշտ մնալով Սպահան, շարադրած է մեծ մասը իր գրուածքներուն, որոնք գրեթէ բոլորը հայ եկեղեցական հարցերու կը հային : Անոնցմէ ոմանք կըրցաւ յետոյ հրատարակել. ուրիշ գրուածք մը, «Հայոց սխալները կամ մոլորութիւնները» [Errores Armenorum] խորագրին տակ, Հռոմ Ս. Ժողովին ներկայացուց, եւ որ 1648 Մարտ 23ի նիստին քննութեան ենթարկեց²⁶ :

24. S. PETROWICZ GR., ibid., p. 127-128.

25. AP. SC, v. I, f. 28-30.

26. AP. Acta, v. 18, f. 52, n. 17.

Այդ գիրքերէն մէկն ալ է «Յաղագս ճշմարտութեամբ Հաւատոյն Քրիստոնէականի», ուղղուած՝ «առ Շահ Ապպաս, Արքայն Պարսից», ի Պօղոսի Փիրոմալլի, ի Կարգէն Քարոզողաց Վրդ.է, եւ Արհիեպիսկոպոսէ Նախնականայ Նահանգին : Տպուած Հռոմ, 1674ին, առ Պօղոս Մոնէտում (apud Paulum Monetum) : Աստուածաբանական սլացքով ունի յառաջաբան մը (էջ 1-5) :

Հատոր Ա. Յաղագս Միոյն Աստուծոյ եւ երկից Ամսանց (էջ 7-107) :

Հատոր Բ. Յաղագս Քրիստոսի ըստ որում է Մսեհ (էջ 108-207) :

Հատոր ըստածները կը համապատասխանեն Ա. Մաս եւ Բ. Մասի Գրքին բո-

Ջանց կ'ընենք հոս քննել զանոնք : Մեզ շատ պիտի հեռացնէին մեր նիւթէն : Այսչափ միայն հաստատելու է, որ այդ մակագրութեամբ Հռոմ դացած գրութիւններ, բացի անոնցմէ՝ որ կը հայէին Քաղկեդոնի Ժողովին Քրիստոսաբանական բանաձեւին, որուն շուրջ Հայ եկեղեցին, դարերու ընթացքին, արտայայտութեան տարբերութիւն մը ունեցած է, մնացեալ գլուխները այդ սխալներուն կը ներկայացնեն կամ անուս ժողովուրդին ու կղերին տգիտական բարբառջանքները, կամ ալ այս ու այն եկեղեցական հեղինակին անհատական կարծիքները, որոնք Հայաստանեայց պաշտօնական եկեղեցիին պաշտօնական դաւանանքը չեն, այն որ կը բովանդակուի միայն իր պաշտամունքային աղօթքներուն եւ կամ ժողովական որոշումներուն մէջ :

Այդ դարուն, երբ կը գրէր Հ. Պիրոմալլի, եթէ կար աչքի դարնող կէտ մը՝ որ պարբերաբար, հոս հոն, կ'արատաւորէր Հայաստանեայց եկեղեցւոյ համբաւը, այդ ալ կը խտանար իր հակաքաղկեդոնիկ դիրքին մէջ, փողահարուած՝ մանաւանդ ինչ ինչ քաջ շրջաններուն, իր պաշտամունքային կեանքին մէկ առհաւակն շեղումով. «Ո՛վ հրաշալի նախահարք» շարականին անճահօրէն կցուած նըղովքի երեք տուններով, Ս. Լեւոնի ու Քաղկեդոնի տիեզերական Դ. Ժողովին դէմ : Գործ՝ մոլի հակաքաղկեդոնիկ գրչի մը, բովանդակութեամբ՝ աղքատ, հայերէնով՝ աղճատ, տխուր դարու մը սպրդաւ՝ Հայաստանեայց եկեղեցւոյ մարգարտայեւ Շարականոցի դանձարանին մէջ. նղովք՝ որուն նման նմոյշ ո՛չ իսկ Աղեքսանդրիոյ՝ Դիոսկորոս Պատրիարքին եկեղեցին մուծած է իր պաշտամունքին մէջ : Եւ այս՝ հակառակ անոր որ դարերու ընթացքին, մեր լուսամիտ Հայրապետները ճանչցած էին Քաղկեդոնի ժողովէն հուշակուած քրիստոսաբանական բանաձեւին ուղղափառութիւնը, որմէ՝ թէեւ այլ տարազով՝ տարբեր չէր Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանածը : Եւ նոյն ինքն ժէ. դարուն, Մովսէ Գ. Տաթեւացի Կաթողիկոս վերցուցած էր այդ յաւելուածին երգեցողութիւնը : Ստեփանոս Ռոշքա իր «Ժամա-

վանդակութիւնը աստուածաբանական է : Կը դնէ նաեւ իր պաշտպանած theseին դէմ եղած առարկութիւնները ու անոնց լուծումները :

Վերջաւորութեան՝ ունի հետեւեալ յայտարարութիւնը. «Ահա այս է, ով թաղաւոր մեծարդոյ, հաւատն քրիստոնէից, որ զմեզ եւ զքնաւս հաւատացեալս վերածէ յարքայութիւն երկնից, որպէս խոստացաւ ինքն Քրիստոս, յոյս ամենեցուն առելով. Որ հաւատայ յիս, տաց մմա զկեանս յաւիտեանակա : Եւ դայս սրբազան եւ միակ հաւատս համաօրոյցին Առաքեալն սոփքը» :

Էջ 207 գետեղած է Առաքելոց հանգանակը, ու վերջ :

Հայերէն լեզուն պարզ է, անշուշտ աստուածաբանական եզրներով : Գիրքը յօրինուած է Պարսից արքային համար, որուն բնագիրը պարսկերէն է, եւ որ հրատարակեց Վիեննա, 1858ին : Ներկան ատոր Հայերէն թարգմանութիւնն է : Արքան՝ Շահ Աբաս փոքրն է, որ իշխեց 1642-1665. Պիրոմալլի գրեց այս գիրքը մինչ Սպահան էր, 1652էն առաջ :

նակագրութիւն» գրքին մէջ կը գրէ. «Մովսէս Կաթողիկոսն իբրեւ նստաւ յաթոռն էջմիածնի, յայսմ ամի գրեաց զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ, հանդերձ երկոտասան եպիսկոպոսօք, ստորագրեալն եւ կնքեալն առ Ուրպանոս Ը.: Սա երարձ ի Շարականէն Ան (°) զոր և ՎՎ. Նիկողայոս Արքեպիսկոպոսն մեր ի դաւանութեան իւրում յիշէ²⁷: Արիշան ալ կը յիշատակէ նոյնպէս թէ «երարձ ի Շարականէն Ո՛վ հրաշալի մախաւարք, զերիս յետին տունն, ի հերձուածողաց ոմանց յաւելեալս, որպէս յայտ է ի թղթոյ նորա եւ առ մեր Լէօպոլսեցիս»²⁸: Հակառակ այդ բոլորին, երբ ամբողջապարական ոգին հրահրուէր, ինչպէս պատահած է Պիրոմալլիի պարագային, հոս ու հոն ձեռք առնուած են այդ նշուղթները իբր ինքնապաշտպանութեան դրօշ մը:

ՀՍ.ի Ժողովին 14 Փետր. 1639ի նիստին մէջ, Կարդինալ Ալպորնատոյ, վկայութեամբ նամակի մը՝ որ առաքուած է Հռոմ, Պարսկաստանի Կարմեղեան կրօնաւորներու Մեծաւոր Հ. Տիմասէն, կը յայտարարէ. «Հայոց Պատրիարքը [= Կաթողիկոսը] Փիլիպպոս, ինչպէս նաեւ իր եպիսկոպոսներէն ուրիշներ եւս ճանչցած են, մեր Միսիոնարներէն տրուած պատճառներուն հիման վրայ, թէ սխալ է ինչ որ իրենց նախնիքներէն առարկուած է՝ Ս. Լեւոն Պապին հասցէին, բայց տակաւին կարելի չեղաւ յետս կոչել տալ Դիոսկորոսի հերետիկոսութիւնները, ու Բաղկեդոնի Ժողովը ընդունիլ»²⁹:

Դարերու բացած խոցուածքն էր. մէկ օրէն միւսը չէր կարելի սպիացնել:

Որքան անյարիր երեւոյթ մըն էր, մանաւանդ քրիստոնէութեան միջազգային շրջանակներու աչքին, նշուղթ, եւ այդ ալ տգիտօրէն, մեծ Եկեղեցւոյ մը մէջ յարգուած Սուրբ Հայրապետի մը յիշատակը ու Ժողով մը՝ որ իբր տիեզերական ճանչցուած է քրիստոնեայ աշխարհէն, 90% տոկոսով: Եւ այդ այնպիսի դարուն, ուր թէ՛ Ս. էջմիածնի եւ թէ՛ Սիսի կաթողիկոսները, իրենց պաշտօնական յարաբերութիւններուն մէջ, Հռոմի հետ, կը ջանային փարատել երկու Եկեղեցիներուն մէջ անցեալին ստեղծուած պղտոր միջնորդութիւնը, տալով իրենց ուղղափառ դաւանանքը:

Եւոյթ մըն էր անոպայ, որ ոչ միայն կը նուաստացնէր, քրիստոնեայ աշխարհի աչքին, Հայաստանեայց Եկեղեցւոյ արժանապատուութիւնը, այլ կը վնասէր մանաւանդ իրաւախոհ համակեցութեան, քրիստոնէական եղբայրութեան զգացումով:

27. ՄՏԵՓԱՆՈՍ ՌՕՇՔԱՅ, Ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցական, տպ. Վիեննա, Միսիթ. տպ. 1964, էջ 173, նաեւ ծնթ. 11:

28. Կամեմից կամ Տարեգիրք Հայոց Լեհաստանի, Վենետիկ, Ս. Ղզ. 1896, էջ 138, տարեթիւ 1630 - ԹՁԹ:

29. AP. Acta, v. 13, f. 252v, n. 28.

Պիտի տեսնենք թէ ինչպէս Ոսկան Վրդ. 1665ին, իր տպած Շարակնոցէն զայն վերցուցած էր:

ԽԱՆՈՒՏ ԻՐԱՒԱՆՈՂՈՒԹԻՒՆ ԼՎՈՎԻ ԹԵՄԻՆ ՇՈՒՐՁ

Ընթերցողը իրաւացիօրէն հարց պիտի դնէ՝ թէ Հ. Պիրոմալլին այս երկրորդ երթը դէպի Արեւելեան Հայաստան ու Պարսկաստան, որ երկարագոյն տեւողութիւն ունեցաւ - 1643-1653 զարունը - Լվովի հայ թեմին մէջ ծագած հարցերը կարգադրելու համար, ի՞նչ ելք ունեցաւ արդեօք:

Հ. Պիրոմալլի, Թարգման Հռոմի եկեղեցական շրջանակներուն, իբր անոր դեսպանը, իր բանակցութիւններու ընթացքին, էջմիածնի Վեհին հետ, հասկցուց թէ արքունի ուղին Լվովի վէճերը արմատէն դարմանելու՝ էր եկեղեցական հաղորդակցութեան վերահաստատումը, երկու Եկեղեցիներու միջեւ:

Երբ զգաց թէ այդ ուղին խոչընդոտներու կը հանդիպէր, այն ատեն դարձաւ թելադրել բազմիցս, Հռոմի բարձրագոյն իշխանութիւններուն, իբրեւ բարեացակամութեան ապացոյց, վերադարձնել Լվովի Ժողովուրդին այն հատուածին՝ որ անհաշտ էր Նիկողայոս Արքեպիսկոպոսին հետ, մէկը կնամ միւսը հայ աղօթատեղիներէն:

Այսպիսի արարք ոչ միայն գոհացում պիտի պատճառէր, գէթ չափով մը՝ ընդդիմադիր կուսակցութեան, այլ նաեւ բարեացակամութեան ցոյց մը պիտի ըլլար Հայոց Կաթողիկոսին հանդէպ: Միսիոնարը, մօտէն տեղեակ երկու կողմերու տեսակէտներուն, ասիկա կը նկատէր իբր անհրաժեշտ միջոց մը բարեացակամութեան, Հռոմի կողմէ, ու առաջին քայլը դէպի համաձայնութիւն:

Սակայն ատիկա անհասկնալի բարբառ մըն էր, Հռոմի շրջանակներուն մէջ, այդ դարուն տիրող իրաւակարգին ըմբռնումներուն համեմատ: Մինչդեռ Ս. Ժողովին տեսակէտը հետեւեալն էր. Ժողովուրդը թող հաշտուի եւ համաձայնի իր Առաջնորդին հետ, ոչ միայն պիտի վերստանար իր բոլոր աղօթատեղիներուն վայելումը, այլ նոյնիսկ իրեն ընդունելի Առաջնորդ մըն ալ: Ընդհակառակն, հաւատացեալ Ժողովուրդը անջատուած իր Եպիսկոպոսէն, մանաւանդ թէ անոր դէմ դիրք բռնած, ինքզինքը զրկած կ'ըլլար այդպիսի իրաւունքէն³⁰:

Պիտի բաւէր, գետինը հարթելու համար, համաձայնութիւն մը գոյացնել այս կէտիս շուրջ: Գոյացաւ հաշտութիւն մը, կամ աւելի ճիշտ՝ *modus vivendi* մը ձեւացաւ, երբ Փիլիպպոս Կաթողիկոս, Ե-

30. AP. Lettere Volg. v. 20, ff. 158-159v, lettera di 1641 maggio 18. Այս նամակը՝ ՀՍ.ի Ժողովին կողմէ գրուած է Լեհաստանի Առաք. Նուիրակին:

բուսադէմէն վերադարձին, Կ. Պոլիս հանդիպեցաւ, ու Լեհաստան Նուիրակ զրկեց իր թանկագին խորհրդականներէն՝ Յովհան Արքեպիսկոպոսը, որուն ճկուն միջամտութեամբ, Լվովի Նիկողայոս Թորոսովիչ Արքեպիսկոպոսը Պոլիս դնաց Կաթողիկոսին մօտ, եւ իր առաջնորդական պաշտօնին ճանաչումը ունեցաւ Կաթողիկոսէն, ու դոյացաւ հաշտութեան վիճակ մը:

Փիլիպպոս Կաթողիկոս, իր 1653 Ապրիլ 15ի կոնդակին մէջ, ուղղուած Լեհահայոց, կը գրէ. «ահա թաղում խոնարհութեամբ» մեղի եկաւ Ձեր Արքեպիսկոպոսը, «եւ եցոյց մեզ զկատարեալ հնազանդութիւն իւր. եւ մեք վասն օգտի ձերոյ եւ խաղաղութեան ընկալաք բազում սիրով եւ յոյժ մեծարանօք, որպէս վայել է հարազատ որդւոյ դարձելոյ առ ծնողն. եւ վերստին շնորհեցաք զիւր եպիսկոպոսական պատիւն եւ իշխանութիւն»: Այլեւս, կը գրէ Կաթողիկոսը, «իբրեւ զմի հարազատ եւ հնազանդ որդւոց մերոց է»: Ու կը յանձնարարէ մեծարանքով ընդունիլ զինքը, եւ հնազանդի իրեն, «եւ ի հոգեւոր գործ մի՛ խառնիք, որ ոչ վերաբերի առ ձեզ. դորա է գործ»: Իսկ եկեղեցական հաս ու իրաւունքը որ կը պարտիք իրեն, անքերի տուէք: Եւ ով որ խռովութեան պատճառ ըլլայ, բանադրանք պիտի ընդունի: Հուսկ, Պր. Խաչքօն կ'անուանէ Ս. Էջմիածնի հասին ու իրաւանց ներկայացուցիչը եւ դանձապահ, զոր յետ հաւաքելու, Արքեպիսկոպոսին ու տասներկու դատաւորաց դիտութեամբ ու կնիքով էջմիածին պիտի առաքէ³¹:

Յովհան Արքեպիսկոպոսը, Արդնցի կոչուած Վարդապետն է, Կաթողիկոսին սիրելի անձնաւորութիւն, իր խոհականութեան համար: Ինք յաջողեցաւ շարժել Նիկողայոս Արքեպիսկոպոսը՝ Փիլիպպոս Կաթողիկոսին ոտքը բերել: Իսկ սա իր աթոռին վրայ հաստատելով Արքեպիսկոպոսը, խոհական իրաւարարութեան մը յանգեցան: Էջմիածնի իրաւունքները, աւելի տուրքի եւ հանդանակութեան՝ քան թէ հոգեւոր, թեմին վրայ ճանչցուեցաւ, ստեղծուեցաւ համաձայնութիւն մը, թէեւ թոյլ, որ շարունակուեցաւ Յակոբ Զուղայեցի Կաթողիկոսին օրով ալ:

Տարակոյս չկայ թէ շատ աւելի ամուր ու տեւական հիմերու վրայ դրուած պիտի ըլլար այդ համակեցութիւնը, մնայուն գոյավիճակ մը դարձած կ'ըլլար եկեղեցական հաղորդակցութեան, եթէ երբեք համաձայնութիւնը գոյացած ըլլար, զոյգ Եկեղեցիներուն, Հայաստանեայց եւ Հռոմի իշխանութեանց բարձունքը: Բան մը՝ որուն համար ճգնեցան հեռատես ու յստակատես գործիչներ, երկուստեք ալ ցոյց տրուած բարի տրամադրութիւններով: Բայց աւա՛ղ, միտքերը տակաւին իրենց լայն խաւերուն մէջ՝ ատոր համար հասունցած

չէին. եւ քաղաքական պայմաններն ալ, որուն ենթարկուած էր էջմիածնի Աթոռը, բոլորովին աննպաստ էին:

Փիլիպպոս Կաթողիկոսին կոնդակը, ուղղուած Լեհաստանի Հայերուն, 1653ի Նոյ. 5ին, յետ հաստատելու իր նախորդ կոնդակին բովանդակութիւնը, կ'ըսէր. «Ձեռքէս եկածը, իմ կարելիս ըրի, աւելին ինծմէ մի՛ պահանջէք այլեւս. «Սիրեցեալ որդիք, որպէս բազում անգամ գրեալ եմք, եթէ մահուամբ մերով եւս՝ լինէր հնար փրկութեան ձերոյ եւ ազատութեան, ոչ խնայէաք, որպէս ծածկազիտին է յայտնի. արդ, ի մերմէ կողմանէ՝ զոր ինչ էր ինդիր ձեր՝ կատարեցաք, այսուհետեւ մնայ ձեր քաջութիւնն...»։ ու կը վերջացնէ գիրը՝ յանձնարարելով միաբանութիւն եւ հաշտութիւն իրարու հետ. հնազանդութիւն Ս. Լուսաւորչի Աթոռին, ու յարում հայրենի աւանդութիւններուն, եւ «ձեր եպիսկոպոսն ի սուրբ էջմիածնի հայրապետէն լիցի ձեռնադրեալ»³²:

Բայց ախո՛ւս, ասոնք դատապարտուած էին մնալու իբր. հոգեւոր մաղթանքներ. քանի կը պակսէր եկեղեցական բնականոն հաղորդակցութիւնը՝ երկու Եկեղեցիներու միջեւ, Լվովի հայ թեմը՝ Հայաստանեայց Եկեղեցիէն ի սպառ անջատուած պիտի մնար, փոխանակ երկու դադաթները օղակելով, շարունակելու իր կենսունակութիւնը՝ իր սկզբնական բունին վրայ:

(Շար. 3)

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԱՄԱՏՈՒՆԻ

31. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Կամենից, անդ, էջ 252-254:

32. Անդ, էջ 255-256: